


Գ. ՌԵԱՆՑԱՆ

(ԲԱՆԱՆՈՐ ԳԱՎՈ)

Կ Յ Ա Ն Ք Ի
ՀՈՐՁԱՆՔՈՒՄ

Խարթական



-6 NOV 2011

Գ. ՈՀԱՆՅԱՆ
(ԲԱՆՎՈՐ ԳԵՎՈ)

891.99

0-33

ԱՅ.

ԿՅԱՆՔԻ ՀՈՐՁԱՆՔՈՒՄ

ՊԱՍՄԱՆՉՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՅ

Խ ՀԱՏՈՐ

10/10/10/18

Ա/Օ/Հ/Դ

Ս Ա Խ Ե Լ Գ Ա Մ Ի
ԲԱՐԵԼԻ

1936



Պատ. խմբագիր՝ Ռ. ԼՈՒՍԻՆՅԱՆ
Տեղ. Խմբ. և սըբագրէչ՝ Զ. ԲԱՐՈՒՐՅԱՆ

ԿՅԱՆՔԻ ՀՈՐՉԱՆՔՈՒՄ

I.

ՅԵՐԻ ՇԶՈՒՄ ԵՅԻՆ ՇԶԱԿՆԵՐԸ

Շուշանը ժամանակից զուտ եր պառավիր։ Նրա յերեսի կնճիռները, արծաթափայլ ճերմակ մաղերը, կոռացած մեջքը յոթանասուն տարեկանի տեսք եյին տվել նրան, չնայած հիսուն տարեկան հազիվ լիներ։

Նրա աղջիկը, Մանուշակը, 25 տարին նոր եր բոլորել։ Շատ եր սիրում Շուշանը Մանուշակին։ Մինչև Մանուշակը գործարանից տուն եր դառնում, նրա աչքը ջուր եր կտրում։ Հենց վոր կեսորն անցնում եր, Շուշանն իր աչքը հառում եր պատի ժամացույցին, ակնապիշ նայում նրա սլաքներին։ Յերբ հոգնում եր, իր ջրակալած աչքերը դարձնում եր ընդարձակ ու լուսավոր սենյակի մյուս պատերին։ Դիտում եր պահարանը, շարած աթոռները, այսուհետեւ Մանուշակի ու Միմոնի մանճակալները, գրքերով ծանրարեռնված սեղաննը, վորի կենտրոնում դրված փոքրիկ շրջանակի միջից հեղանամբույր ժպիտով նայում եր Մանուշակի նկարը։

Թվում եր Շուշանին, թե նկարը հետեւում ե իրեն և նրա սուր հայացքից խուսափել չեր կարողանում։ Ամեն անգամ հիշում եր Մանուշակի մնամիկ կշտամ-

բանքը՝ «Մայրիկ, չե՞ վոր դու յերդվել ես իմ արեսով
չե՞ վոր խոստացել ես չանհանզստանալ, չարտասվել...
ինձ վշտացնում ես»...

Եերբ ժամացույցը զարկում եր չորս անգամ, Շուշանը շտապ շալը գցում եր ուսերին, գուրս գնումը փորձում եր պատշպամբը զրկող խիտ ծառերի արանքից նայել դեպի փողոց, զործարաններից վերադարձող բանվորների մեջ տեսնել Մանուշակին ու Սիմոնին: Սակայն իզուր, աերևախիտ ճյուղերը մեկուսացրել եյին Շուշանի բնակարանը. Շուշանը չեր կարողանում բան տեսնել նա բարկանում եր, մըթմըթալով իշնում սանդուխքներից ու գնում փողոց:

Շուշանի զըուխն ու ուսերը միշտ առաջ եյին ընկնում, վոտքերը յետ մնում, աջ ձեռքը շարունակ կորացած մեջքին դրած, նա, կարծես, հրում եր շալի տակից մեջքն ու վոտքերը, վոր արագ շարժվեն, հասնեն զլիսին և ուսիրին:

Քաղաքի ծայրամասի այդ փողոցը վերջանում եր լայնարձակ դաշտով: Դաշտի շոյող ու հանդարտորին ծփացող կանաչ ֆոնի վրա ձզված զուզահեռ լարերի տակից սլացող տրամվայի վագոնները կանգ եյին առնում այդ փողոցի մոտ:

Հեռվում, սարալանջին, յերեսում եյին բազմահարկ շինքեր, պարսպապատ աշտարակներ, գմբեթազարդ կըտուրներ: Մխնելու յզներից դուրս ժայթքող թանձր ծուխը ոճապտույտ գալարումներով բարձրանում եր սարի գագաթն ի վեր, ապա նոսրանում, կորչում ջինչ յերկնակամարի անհուն տարածության մեջ:

Շուշանն իր աչքերը անկում եր մոտեցող տրամվայի վագոններին: Եերբ յերեսում եյին Մանուշակն ու

Սիմոնը, Շուշանն առանց յետ նայելու վաղում եր գեղազի տուն: Մանդուխբների աստիճաններով այնպես առագ եր ցատկում, վոր նրա սիրտն, ասես, բնից գուրս եր թոշում: Արագ մտնում եր սենյակը, շտապով շալը մի կողմ ձգում, նստում իր թախտին: Նա փորձում եր ծածկել, հանգիստ ձեանաբ, իրը թե ինքը հենց այդպես ել թախտին նստած ե յեղել, Բայց իզուր: Նրա գողգողացող չորացած ձեռքերը, սրտի անորինակ առագ զարկից վեր ու վար անող կուրծքն ու ուսերը, ձմշկած մեջքի վրա խաղացող ծնուռ և լայնացած քըթածակերը մատնում եյին պառավին:

Մանուշակն ու Սիմոնը հաճախ կշտամբում եյին նրան:

— Մայրիկ, դու զեռ շարունակում հս... Հո կյանքից չես հոգնել: Մենք հո յերեխաներ չենք, վախենում ես կորչենք...

— Զե, չե, բալեք ջան, ձեր յետեկց չեկա... Հենց ննպես, բակն եյի իջել...

Արդարանալու փորձն իզուր եր: Հոգնածությունից ընդհատվող ձայնն ավելի յեր մատնում Շուշանին: Սակայն Մանուշակն ու Սիմոնը աշխատում եյին ըըվշտացնել նրան, միայն թեթե ակնարկով հասկացնում եյին, վոր իրենք չեն խարվում:

Հաճախ, ճաշելիս, Շուշանն իր բաժինն առաջարկում եր Մանուշակին կամ Սիմոնին, յերբեմն նրանց կերակուրն ավելի մեծ ամանում լցնում և մաի լավ կտորները նրանց հրացնում:

Մանուշակն ու Սիմոնը տանջվում եյին պառավի այս չափազանց հոգատարությունից, խնդրում եյին,

աղաչում, վոր նա թողնի այդ սովորությունը, բայց
ապարդյուն

Յերբ առավոտները Մանուշակն ու Սիմոնը գործի
ելին գնում, պառավը շարունակ հիշեցնում եր, վոր
վերնազգեստի կոճակներն ամուր կապեն, չմրսեն, զոր-
ծարանում ընդմիջումի ժամանակ տաք կերակուր ու-
տեն... Մանուշակն ու Սիմոնը հաճախ ծիծաղում ելին,
իսկ յերբեմն ել դժոհության նշաններ ցույց տալիս:

Գիշերները, մինչև Մանուշակի և Սիմոնի տուն գա-
լը, պառավը չեր պառկում, լուս նստում եր թախտին,
հորանջում կամ խորասուզվում մտքերի ծովում:

Մի զիշեր նրանք սովորականից ուշացան: Պառավ
Շուշանը չտփաղանց անհանգստացավ: Նա յերկար ըս-
պասելուց հոգնած, պատրաստվեց դուրս գալ փողոց,
պնակ տրամվայի կանգի մոտ: Բայց Սիմոնի մայրը,
Եփոն, հարեան սենյակից յեկավ նրա մոտ, հանգըս-
տացրեց նրան ու սկսեց դեսից-դեսից հիշողություն-
ներ ու յեղելություններ պատմել: Նա Շուշանին ել
տրամադրեց, վոր սա իրենց զյուղի սովորություննե-
րեց և իր անցյալից վորեե բան պատմի:

Շուշանը խոր հոգոց քաշեց, ապա քաղաքի այդ
ծայրամասից մտքով տեղափոխվեց հեռու, իրենց փոք-
րիկ զյուղը: Ասես, չեր նկատում իր զրուցընկերին:
Մանրիկ աչքերն անորոշության մեջ հառած, ամենայն
մանրամասնությամբ նկարազրեց իր ամուսնու առա-
ջն հանդիպումը:

— Կործանվի ու անդարձ ըլի առաջվա որենքը, —
սկսեց Շուշանը, — ինձ վոր նշանեցին, ամբողջ չորս ա-
միս, մինչև հարսանիքիս զիշերը, մարդուս յերեսը չիյի
տեսել: Պակիս զիշերը տեսա կողքիս կանգնած մի

աժդահա տղամարդ, յերկար չուխով, բուզմենտի ար-
խալուզով, մեծ փափախով, վոլորած բեղերով... Յե-
րեսն ել հնագես խոժու եր, վոր ահից սփոթնել, քա-
րացած մնացել եյի կանգնած: Ամբողջ զեղն իմ հար-
սանիքի քեփ ու թամաշումն եր, իսկ յես յերեք որ ու-
դիշեր, յեսիրի նման, լուս ու մունջ, առանց ուտելու,
կծկվել եյի գոմի մի անկյունում... Ո՞ւմ ասեյի, մւմ
գանգատվեյի... Յես ել Մանուշակիս նման, հորով յե-
թիմ եյի, տեր ու տիրական չունեյի... Քեպիս (մոր-
յեղբայր) հրամայել եր մորս, վոր ինձ տա եղ աժդա-
հա մարդուն... Սև ու մութ եր եւել են սհաթը, քանդ-
վել եր են յեկեղեցին ու պապս նձել տերտերը, վոր
բայրի են որերը չքաշեյի...

Շուշանի աչքերը ջրակալեցին: Նա գլուխն որորեց
և կարծես ուզեց վերջացնել պատմությունը: Բայց Սի-
մոնի քույրը, Սիրանը, վոր քիչ առաջ յեկել եր մորը
կանչելու, հարց տվեց.

— Շուշան՝ տատի, ի՞նչ որեր ես քաշել: Աղջիկդ
հասել ե, վորակյալ վարպետ և դարձել, յերբորս հետ
միասին լավ ապրում են, մենք ել ենք յերջանիկ, գու
ել, ել ի՞նչ դարդ ունես: Ինչի՞ յես անցած որերդ ա-
նիծում:

— Ե՛, բալա ջան, — գլուխը գանգաղ վեր բարձ-
րացնելով շարունակեց Շուշանը, — եղ նոր եմ աչքս մի
քիչ բաց արել, իմ քաշած որերը թշնամիս չքաշի...
Մարդուս ձեռին 13 տարի ապրեցի, ծիծաղի կարոտ
մնացի: Մարդս ել ինձ նսան անաել եր, Գեղում մի
որպար հող ուներ, մի կոփ, մի փոքրիկ ել բախչա: Տարին
տասներկու ամիս յես ու նա աշխատում եյինք,
պարագի տակից չեյինք գուրս գալիս, Տարվա զլխին

Մանուշա վոր ծնվեց, մեր գեղում սով եր, յիրաշտը
չորացրեց բերքը Մի որավորից մի կորեկ ել չստո-
ցանք Դե, ում ամբարները լիքն եյին, նրանք ուրա-
խացան Մեր գեղի ռևները...

— Կուլակները^o, Շուշան տատի, — կարեց Սիրանը
— Հա, բալա ջան, են ժամանակ կուլակները գե-
ղի տերերն եյին, նրանց տմբարներում ննջան հաց
կար, վոր տաս տարի ել բերք ջգար՝ սով դեղին հե-
րիք եր, Մովզովը, քյոլիքն, գվիրը, տերտերն ու տի-
բացուն տնեւ-տուն ման եյին գալի, ում տանը քիչ ու
միչ ցորեն յա կորեկ եյին տեսնում, խլում, տանում
եյին իրանց առուրքի հաշվին... Թագավորի բեզյան
ել մի կողմից եր զոռում Եդ տարի մեր բախչեն ծա-
խեցինք տերտերի վրա՝ մի ջվալ ցորենով... են ել կե-
սը տվինք տուրքերին... Զմեռվա կեսին հացներս պա-
կասեց: Աղաչանք-պաղատանքով մեր գեղի կուլակ Զա-
շոտ Գալոյից մի ջվալ ցորեն շահով (տոկոսով) վերց-
րինք, Եդ մի ջվալի պարտքի տակից տասը տարի
գուրս չեկանք... Պայմանը՝ տարին մի ջվալ շահ եր
Դե, մեր ունեցած մի որավարից լավ բերքի տարին
յերեք ջվալ եյինք վերցնում, միջակ տարին՝ յերկու...
Եդ տարին միջակ եր: Թե յերկու ջվալն ել տայինք
Գալոյին՝ եդ տարին ելի սոված կմայինք: Մի ջվալը
տվինք շահը, գլուխը մնաց: Եղաս ամեն տարի շահը
տալով, գլուխը մնում եյինք պարտք: Տասը տարուց
հետո ել հակ չունեյինք: Գալոն դատարանից լիսա
վերցրեց, մեր հողը խեց: Կամն ել սատկեց, մնացինք
զարդարյուն... Ողորմածհողի մարզս բատրակությու-
նով հաց չեր կարողանում հասցնել, պարտք տվող ել
չկար. դե, վոր վոչինչ չունեյինք, վճռաեղից կարող

եյինք վերադարձնել, մնացել եր մի քանդած քոխի,
են ել թագավորի տուրքի հաշվին խլեցին...

Շուշանը լոեց: Դուրս նայեց բաց պատուհանից:
Բարակ անձրեկ կաթիլները թրջել եյին պատշգամբի
հատակը, վորը ելեկտրական լույսի ցոլքերից փայլում
եր հայելու նման:

— Քուսնամս, յերեխեքը կթրջվեն, — ծնկներին խը-
փերով բացականչեց նա:

— Ի՞նչ ես վախենում, — վրա բերեց Սիրանի մայ-
քը, — աղ հո չեն, վոր հալվեն. թե քո աղջիկն ու փե-
սեն են, իմ ել տղեն ու հարան են...

— Տատիկ ջան, տատիկ, — ժպիտը գեմքին զիմեց
Սիրանը Շուշանին, — ախր զու չվերջացրիր ե, բա վեր-
ջըն թնչպես յիղավ... Ասում ես քոխին ել տարան,
քա զուք վերտեղ եյիք ապրում...

— Զառ ու ջանդամին, բալա ջան, — նորից նախ-
կին դիրքն ընդունելով շարունակեց Շուշանը. — Հավա-
քեցինք ային-ոյինն ու յեկանք քաղաք.., Մանուշ 12
տարեկան եր, Ամուսինս՝ Գրիգորը կարծում եր, թե
քաղաքում հեշտ կապենք... եստեղ ել զոնեզուռ ըն-
կած, սադ մի ամիս չկարողացանք մի շվաքի տակ
մտնել... Քաղաքի են ծերին, բաղերից մեկում, մի
պուճուր քոխու մեջ...

Շուշանի խոսքը կիսատ մնաց. նրա զլուխը ծան-
քացավ, սիրտը ճմլվեց, կոկորդը սեղմվեց, ատամներն
իրար կպան, ու աչքերն անթարթ, մնացին բաց... Ե-
մին ու Միրանը վախեցան: Մեկը ջրի վազեց, մյուսը
Շուշանի ձեռքերը տրորեց, ճկույթը կծեց, կրծքի կո-
ճակները բաց արեց և սեղանի վրա դրված լրագրնե-
րից մեկով հով արեց...

— Ձենդ զլուխդ չգցես, — զզուշացրեց Եփոն Սիրաւնին, — Մանուշը կարող և հանկարծ գալ, ձայնիցդ կը վախենա...

Շուշանն ուշքի յեկավէ, Վիզը թեք, աչքերն անուրոշության մեջ հառած, խոր հոգոց քաշեց ու մի քանի անգամ կրկնեց. «Հա, բաղը, են բրիշակ բաղը... Թրիշոյի բաղը»...

Մինչ նրանք հարցերի տարափ եյին թափում իւմանալու Շուշանի ուշաթափության պատճառը, սանդուխքներից լավեց Մանուշակի ու Սիմոնի ծիծաղն ու վոտնաձայնը:

Շուշանը հանկարծ սթափվեց, տեղումն ուղղվեց և ձեռքն իր շրթունքներին մոտեցնելով հասկացրեց Եփոյին ու Սիրանին, վոր Մանուշակին չասեն յեղիլության մասին:

Այդ զիշեր Շուշանը հանգիստ չքնեց: Նրա աչքերը չեյին փակվում: Անցյալի մղավանջը խեղդում եր նըրան, և նա շարունակ շուռ ու մուռ եր գալիս վերմակի տակ: Նա աշխատում եր մոռանալ, վոչինչ չիշել, բայց նրա մտքով, եկրանի ժամանակին նման պատկերվում և սրընթաց անցնում եյին մոտ 15 տարվա դեպքերը: Բոլորն ել մուայլ, տիսուր:

II

ԹԱՓԱՌԱԿԱՆՆԵՐ

Թարուն եր: Անձրեսու ու մառախլապատ որերից մեկը: Քաղաքի կայարանի ընդարձակ սրահի մի անհեյունում մի փոքրիկ արկղ և զզզված պարկ եր

դրված, պարկի պատառութած կողերից գուրս եյին ցցվել գույնզգույն ցնցոտիների ծայրեր: Պարկի վրա դրված եր մի մաշված խուրջին, վորի կիսարաց բերանից յերեսում եյին չորացած ու հացի կտորներ:

Վոչ հեռու, պատին հենված, կանգնած եր մի բարձրահասակ, նիհար, մոտ 40 տարեկան գյուղացիր և մոթալը փափախով, յերկարավիզ, գույնզգույն գուլպաններով, կիսամաշ տրեխներով: Նրա մի քանի տեղից կարկատած, շագանակագույն յերկար չուխայր տակից յերեսում եյին խունացած տրխալուղի խնամքով դասավորված յերկշարք ու կոճակները:

Գյուղացին տանջված ու հոգնած զեմք ուներ Յերեսում եր, վոր յերկար ճանապարհ և կտրել: Նա իր հոգնած աչքերը հառել եր պարկի վրա կծկված կնոջը, վորի դեմքի կեսը, մինչև քիթը, ծածկված եր գըլխի փաթաթանով, յերկար շրջազգեստի փեշերը փռավել եյին կեղտոտ հատակին: Նա իր ուսերին զցածքարակ շալի ծայրերի մեջ եր տռել յերեխայրին և յերեկու ձեռքով ամուր սեղմել իր կրծքին Գեղջկուհին գըլխուը զբել եր յերեխայր գլխին և մուշ-մուշ քնել:

Ըստ յերեսույթին, յերեխան աղջիկ եր, մոտ 12 տարեկան: Նա, իր մոր նման, յերկար շրջազգեստ ուներ հազին: Փաթաթված եր լաթերի ու զզզված շալերի մեջ: Նրա զլխին զցած, ապա կրծքին և մեջքին խաչմերուկ արած շալի արանքից դուրս եյին պրծել նրա ալ-կարմիր այտերը, ու կամար հոնքերի տակ փայլում եյին նրա խոշոր աչքերը:

Պայարանում սովորական իրարանցում եր: Տոմա-արկղի փոքրիկ փեղկի առաջ տեղի ունեցող հրահրոցները, հերթապահ-ժանդարմների գոռդոռոցը միախառ-

Նվել, ժիոր ու վայնասուն եյին առաջ բերել Այդ տարորինակ իրարանցումը չեր վրդովում անկյունում նստած նորհեկներին: Նրանք զեռ շշմած եյին յերկար ձանապարհորդությունից: Թվում եր նրանց, թե քառակի որենքն ե այդ: Անկյունում կանգնած Գրիգորը շատերից եր լսել քաղաքի կայարանի իրարանցման մասին, նախորոք զնացքում պատմել եր Շուշանին ու Մանուշակին: Գուցե հենց այդ եր պատճառը, վոր նըրանք առանց տրաունչի հաշտվում եյին իրողության հետ:

— Այստեղ քննելու տեղ չե, դուրս զնացեք, շուտնվ, — անսպասելի կերպով լսվեց ժանդարմներից մեկի խոպոտ ձայնը:

Գրիգորը սարսափից քիչ մնաց ընկներ, փոքրիկ Մանուշակը կծկվեց մոր զրկում, իսկ Շուշանն, աչքերը կիսաբաց, նայեց Գրիգորին ու բան չնասկացավ: — Անսպուններ, ձեզ եմ ասում, — շարունակեց ժանդարմն ավելի բարձրացնելով ձայնը, — մարշ այստեղից:

Նա քայով խփեց պարկին: Շուշանը վեր ցատկեց, Մանուշակը սարսափահար դողաց ու արտասլեց. իսկ Գրիգորն սկսեց աղերսել ժանդարմին:

— Գլխիդ մատաղ, խփիլ մի, ես ա, ես ա գնում ենք... Հրամանդ ես ա կատարեմ...

Նա իսկույն մի ուսին գրեց արկղը, մյուսին գրեց խուրջնը, թեկի տակ առավ պարկը: Շուշանն ել բռնեց Մանուշակի ձեռքը և ճեղքելով ամեն կողմից վազվող ձանապարհորդների հսանքը, գուրս յեկան փաղոց:

— Հարց ու փորձ անենք, Շուշան, բալքի մեր Սարգսին ճանաչող ըլի, — ասաց Գրիգորն ու առաջին հանդիպածին կանգնեցրեց.

— Քե մատաղ, բալքի գիղենաս դուրդյար Սարգսի տունը, ինքն ել նըհենց ջահել մարդ ա...

Անձանոթը զիմով բացասական նշան արեց և առանց պատասխանելու շարունակեց իր ճամբան:

Գրիգորը շատերին հարցրեց, բայց Սարգսին ճանաչող կամ նրա անունն իմացող չեղավ: Նա չգիտեր՝ վոր կողմը զնար, ուր տաներ Շուշանին ու Մանուշակին: Անձրևի տակ կանգնել եր և շվարած նայում եր թըջվող Շուշանին ու Մանուշակին:

Հեռվում, ծածկի տակ կանգնած վոստիկանը ձեռքի շարժումով հասկացրեց նրանց, վոր չի կարելի կանգնել հրապարակում: Գրիգորն առաջ գցեց Շուշանին ու Մանուշակին և կայարանի հրապարակից սկսվող, գեպի քաղաք տանող լայն ճանապարհն ընտրեց:

Ցերկար քայլեցին նրանք: Կեսորն անցել եր: Մազվող անձրելը, քաղցն ու հոգնածությունը յերեքին ել ուժասպառ եյին արել, նրանց ծնկները ծալվում եյին, աչքերը մթնում: Բայց և այնպիս, նրանք քայլում եյին և հանդիպած մարդուն աչքից բաց չեյին թողնում: Սարգսի հասցեն իմանալու համար:

— Այ մարդ, մեռանք, — տրտնջաց Շուշանը, — Բալքի Սարգսին գտնում չենք, ես զիշեր հո եսպիս պըտըվելու չենք... Մի հայաթ մտի, մի քրիստոնի համկացը մեր հալը, ես զիշեր զլուխներս մի ծածկի տակ դնենք, եգուց լիսը կրացվի, նոր Սարգսի ուժուղին կթնանք...

Գրիգորը մտավ առաջին պատահած բակը: Մուտքի

մոտ էջեցրեց իր բեսը Շուշանին ու Մանուշակին նստեցրեց պարկի վրա, իսկ ինքն առաջ գնաց:

Անձրեց դադարել եր: Շուշանի ու Մանուշակի թըրջ-ված շորերը կպել եյին նրանց մարմնին: Խոնավությունն անցել եր նրանց յերակները: Նրանք գունատվել դողում եյին: Յերկուսն ել աչքերը հառած գեպի բակի խորքը, անհամբեր սպասում եյին Գրիգորի վերադարձին: Յերկար չսպասեցրեց Գրիգորը: Նա վերադարձավ տիսուր և հուսահատ:

— Ես հայաթումը զիփ ել մեծավոր խալի են ապօւմ: Սկի հետա խոսել չուզեցին... Սարգսին ել ճառաջող չելավ... Մի կնիկ ել ոսերեն «պոշոլ-պոշոլ» ասավ..., Են, ես զիշեր մի հանգով ըստեղ յուա գնանք, տեսնենք եղուց աստված վոնց ա աջողում...

Շուշանը յուռ համաձայնեց: Գրիգորը աեղավորվեց պատի տակ, նստեց փոքրիկ արկղի վրա, ձեռքերով հենվեց ծնկներին, զլուխը թեքեց ուսին և աչքերը խփեց:

— Նմնի, սոված եմ, — ատամներն իրար խփելով ասաց Մանուշակը:

Շուշանը խուրջնից մի կտոր չոր հաց հանեց, տըրվեց Մանուշակին, մի կտոր ել ինքը վերցրեց, բայց չկարողացավ ուտել: Նրա կոկորդը սեղմվել եր, պատառը կռւլ չեր գնում: Նա իր կտոր հացը նորից դըրեց խուրջնի մեջ: Պարկի միջից հանեց ցնցուակները, փոեց խոնավ գետնին, Մանուշակին պառկեցը և դատարկ պարկն ել վերմակի տեղ գցեց նրա վրա: Իսկ ինքը նստեց, ծնկները մոտեցրեց փորին, կծկվեց, դլուխը դրեց իր թևերի վրա ու քնեց:

Ո՛, վորքան քաղցր, վորքան անուշ եր այդ քունը: Բակի ներսում, գեղեցիկ կահավորված սենյակներ

բուժ ապրող մարդիկ, ըստ յերեսութին, դեռ չեյին քընել: Գսպդուն մահճակալների վրա փափուկ բարձերով ու մետաքսյա վերմակներով անկողինները թափուր եյին դեռ:

Կես զիշերը մոտենում եր: Բակի բնակիչներից վոմանք դեռ չեյին վերադարձել կափե-շանտաններից, թատրոններից: Վոմանք ել կանաչ սեղանի շուրջը նստած, թղթախաղով եյին զբաղված:

Քունը, վորն այնպես հեշտությամբ իր զիրկն եր առել Գրիգորին, Շուշանին ու Մանուշին, այդ բակի բնակիչներին չեր մոտենում:

Կես զիշերն անցել եր: Կառքերն իրար յետից կանգ առան բակի դռան առաջ: Գրիգորը բաց արեց աչքերը: Շուրջը խավար եր, բան չեր յերեսում:

Մի խումբ ստվերներ Գրիգորի համար անհասկանալի խոսքեր փոխանակեցին, ապա իրար խառնվեց կանանց ու տղամարդկանց քրքիջը: Նրանց քայլվածքից, խոսելուց և կցկոտուր յերգերից դժվար չեր յեղակացնել, վոր յեկողները հարբած են:

Նրանցից առաջինի վոտքը կպավ Շուշանին: Շուշանը վեր թռավ և, հանկարծակի յեկած, զրկեց պառկած Մանուշակին, Գրիգորը շունչը պահած, այնպես եր սեղմվել պատին, վոր, ասես, ուզում եր մտնել մեջը:

— Ա՛, այս ի՞նչ ե... ոգնեցեք, — լսվեց կանացի անսովոր ծղրտոց:

Վրա վաղեցին մյուսները, սենյակներից դուրս թափվեցին թղթախաղը կիսատ թողած պառավերը: Լուցկի վառեցին, շրջապատեցին: թափառականներին:

— Սրանք գնչուներ են, — ասաց հարբածներից մեկը:

— Վոչ, գողեր են, — ուղղեց մյուսը, — սպասում ենք վոր բոլորը քնին, ապա մի բան ծլկացնեն...

— Ավելի շուտ, են մարդը դեղերտիր ե, իրենց յերկրից փախել ե ընտանիքով, պատերազմ դնալուց խուսափելու համար, — վորոշեց մի յերիտասարդ:

— Դուք լավ չեք ձանաշում մարդկանց, — սրախոսեց մի ուրիշը, — են մարդը Եսվեր-փաշան ե, սրանք ել իր հարեմի գեղեցկուհները... Իջել են այս պատվավոր «հյուրանոցը»... Ե՛, ուսխառ-լոկում... գելդիրիլդիրի...

Ընդհանուր քրքիջ առաջ յեկավ:

— Դուքս արեք դրանց, — զայրացած գոռաց փառահեղ սորութով մի մարդ, վոր իր ձախ ձեռքում խառաթուղթ եր սեղմել, իսկ աջով՝ ուսերին դցած յերկար վերարկուի ոճիքը բռնել, — փակեցնեք դուսը... Ի՞նչ եք կես զեշերին կոմեղիա խաղուս...

— Ձեղ մատաղ, — խոսեց վերջապես Գրիգորն անհամարձակ, — դարիք խալի ենք, ծեզը կրացվի զբանանք...

Նրան վոչ վոք լսել չուղեց:

Գրիգորը, Շուշանը և Մանուշակը հավաքեցին իրենց իրերն ու դուրս յեկան փողոց, Նրանց յետելց շոնդյունով փակվեց յերկաթե դուռը, վորից հատօնայները հետզհետե սկսեցին նվազել:

Մի քանի որ նրանք շրջեցին քաղաքի փողոցներն ու շուկաները Մի քանի գիշեր բաց յերկնքի տոկ, հորդ անձրեների ու վոռնող քամու սարսափների տակ անցկացրին:

Անհրապույր քաղաքի անհյուրընկալ բնակիչները հիսութափեցրել եյին Գրիգորին: Նա այժմ իր ձրի

ծառայությունն եր առաջարկում մի գիշերվա պատըսպարան գտնելու համար:

— Հայաթը կմաքրեմ, աղը կթափեմ, ինչ վոր ծանը գործ ունեք՝ կանեմ... Ես գիշեր մի տեղ տվեք, գլուխներս ծածկի տակ գնենք...

Սակայն ամեն տեղ մերժում եյին.

— Քնա, զնա... եստեղ գաղթականի տեղ չի... ձեր տիֆու վոշիլներին չենք կարոտելու...

Շատ տեղեր շներին բաց եյին թողնում, ահարեւ կում եյին խեղճերին: Մի քանի անգամ ել նրանց վոստիկանատուն տարան, անցալիր պահանջեցին, հայհոյեցին, ծեծեցին...

Մի որ նրանք ընկան գետափի փողոցներից մեկը, վոր քաղաքի կենտրոնը միացնում եր ծայրամասի այդեստանը հետ:

Խուրջինում նրանց ունեցած հացը վերջացել եր: Ճանապարհածախսից մնացած մի քանի մետաղե դըրամներ եյին մնում Գրիգորի արխալուղի գրպանում: Դա նրանց վերջին հույսն եր: Գրիգորն այդ գումարով մի սպիտակ հաց գնեց: Յերեքով նստեցին գետափին, կերպն, գետի ջրից խմեցին, լվացվեցին, ապա իրերը վերցրին և շարունակեցին իրենց անորոշ ճանապարհը:


107
108
109

III.

ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Մի տարի յեր անցել նրանց քաղաք գալու որից: Գրիգորը քաղաքի ծայրամասում այգեպան եր գարձել Շուշանն այգու միջի ուստորանի սենյակներն եր

Կյանքի հորձանքում—2,



մաքրում և տիրոջ հայի բը պահում: Մանուշակն ել մորն եր ոգնում: Այս բոլոր ոչխատանքի համար խազգեցին Գրիշոն նրանց արածադրել եր այգու ծայրի փոքրիկ գետնափոր խրճիթը, հաճախորդների կողմից սեղանների վրա թողած հացի պատառները և տարեկան քանակները:

Այսպես, նրանք գարձան քաղաքի բնակիչներ և ապրում եյին ռեստորանի սեղաններին մնացած փշշրունքներով:

Մայիսյան կենսաբույր որերն եյին: Քաղաքի հեռավոր ծայրամասում արդին սկսվել եր կյանքի յեռու գեռը: Դալար բարդիներով պատած այզիների միջնով ձգվող փողոցի յերկու հոգմերով կողք-կողքի շարված ռեստորաններում և հյուրանոցներում ամեն որ, մինչև ուշ գիշեր, խրախճանքն ու քեֆն անպակաս եր:

Այդ ռեստորան-հյուրանոցներից մեկի տուած շարունակ կանգնած եր Գրիշոն, փառանեղ կեցվածքով: Նա մետաքսի արխալուզ եր հագնում, լայն անդրավարժիկ և պսպղուն յերկարավիզ կոշիկներ: Նրա արձաթի գոտուց միշտ կախված եր պարսկական գունավոր մետաքսե մեծ թաշկինութիւն թեպետ բնավորությամբ շատ զոռող ու մուգը եր, բայց ռեստորանի տուած, հյուրերին ընդունելիք, վարչեատրեն փոխում եր իր գեմքի արտահայտությունը, գառնում եր սիրալիք, քաղցրաժամկետ: Նա անծանաշիլի յեր դառնում մանավանդ այն ժամանակ, յերբ ռեստորանն ու նրա վերի հարկի սենյակները լցվում յին քեֆանող յերիտասարդներով:

Գրիշոն մեծ համբավ եր զայելում նրբաճաշակ յերիտասարդների շրջանում: Առ արմանալի հոտառու-

թյամբ գիտեր յուրաքանչյուրի քսակի ծանրությունն ու դրա համապատասխան պատշաճավորությամբ եր ընդունում և ճանապարհ դնում ամեն մեկին: Ռեստորան այցելող արհեստավորների կամ բանվորների յերեսին անգամ չեր նայում, իսկ յեթե սրանք մի քանի շիշ գինով յերկար եյին զբաղեցնում սեղանը, իսկույն աչքերը խոժուում եր մատուցողի վրա ու պատվիրում:

— Ասա, վոր սեղանը շուտ ազտտեն... Վոստիկանները շուրջկալի յեն պատրաստվում...

Զինակոչիկի տարիք ունեցողներն իսկույն թողնում, հեռանում եյին, իսկ հասակավորները, վորոնք գիտեյին Գրիշոյի քաղաքականությունը, պատասխանում եյին.

— Շուրջկալ-մուրջկալը մեզ չի վերաբերում... Մենք վոչ վոքից չենք վախենում... Մենք պատվավոր քաղաքացիներ ենք, մեր քրտինքով ենք ապրում... Հարկն ել ժամանակին ենք տալիս... Ի՞նչ կարող են անել մեզ վոստիկանները:

Մրանք այն կատեզորիայի քաղաքացիներն եյին, վորոնք բացի իրենց խանութից, տնից և զինեանից վոչնչով չեյին հետաքրքրվում... Պատերազմ լիներ, թե խաղաղություն-սրանց համար միենույն եր: Յեկամեն անգամ առաջին բաժակը վիրշնելիս, խում եյին «թագավորի թախտի, խանութի բարագյաթի և հնապանդ ու նամուսով կնոջ կենացը»...

Մի այլ կատեզորիայի մարդիկ ել եյին գալիս Գըրեւ յի ռեստորանը: Մրանք թեպետ շատ փող չունեցիւ, այնուամենայնիվ Գրիշոն սրանց հարգանքով ու պատվով եր ընդունում: Մրանք Գրիշոյի համար պետ-

Քական եյին: Սրանք շատ անգամ եյին Գրիշոյի ռեստորանը փակվելուց փրկել: Սրանցից մեկը՝ ֆինիսսպեկտորն եր, մյուսը դատավորը, յերրորդը՝ պրիստավոր, չորրորդը՝ նրա ոգնականը, հինգերորդը՝ սանիտարական բժիշկը, և ապա մանր ու խոշոր չինովնիկներ:

Ո՞, քանի՞-քանի անգամ այս մարդիկ արձանաւորություններ են կազմել այս սեստորանում զինվորներ ծեծելու, դեռահաս աղջիկներ առևանգելու, արբած մարդկանց վիզ կտրելու և գետը ձգելու մասին... Բայց բոլոր զործերն ել զարձյալ սրանց ձեռքով մեղմվել կամ էարձգել են, վորովհետեւ... Գրիշոյի աղ ու հացը ավելի զորեղ և յեղել, քան իրենց կազմած արձանագրությունները... Ի՞նչպես կարելի յե մոռանալ այդպիսի իգիթին...

Սրանք ել առաջին բաժակը վերցնելիս, դիմում եյին Գրիշոյին, խմում նրա կենացը, նրա զորեղ աղ ու հացի, նրա՝ ն իրենց բարեկամության կենացը...

Գրիշոյի ամենասիրած հաճախորդները քաղաքի վաճառականներն ու անորոշ զբաղմունքի տեր «ինտելիգենտներն» եյին: Ահա, սրանց եր, վոր Գրիշոն իր առատ ժպիտներն եր շույլում, իր ձեռքով աթոռ առաջարկում, ամենաընտիր խմելիքներն ու ամենահամեղ ուտելիքները մատուցում, ամենազեղեցիկ կանանցով թարմացնում և բարձրացնում նրանց տրամադրությունը: Շատ հաճախ, նրանց թախանձանքով, Գրիշոն նստում եր նրանց կողքին, ժամանակ անց կացնում:

Ո՞վ կարող եր նրանց մազին կպչել կամ վիրավորել: Քաղաքի աչքի ընկնող մարդիկն եյին, ամբողջ

շուկան նրանցն եր, լոգում եյին վալյուտայի ծովում... Սրանք ել առաջին բաժակը վերցնելիս խմում եյին «խեղճ ժողովրդի, գեղեցիկ կնոջ և պատերազմի դաշտ մեկնող զինվորների կենացը»...

Այս վերջին կատեգորիայի հաճախորդներիցն եր Ալեքսանդր Պետրովիչ Լազությանը, վորին Սաշա եյին կանչում: Զնայած 30 տարեկան հասակին, նա դեռամուրի յեր: Նրա հայրը՝ Պետրոս Լազությանը, քաղաքի հայտնի Փիլրմաներից մեկի տերն եր և խոշոր կապալներ եր վերցրել պատերազմի հենց առաջին որից: Պետրոսը վոչինչ չեր խնայում իր միակ վորդու՝ Սաշայի կլանքի ու բարեկեցության համար:

Սաշան ամեն առավոտ, անկողնուց վեր կենալով, անմիջապես զբաղվում եր իր արտաքինով: Նախ ածիլում եր, հետո յերեսի ու գզի մանը բշտիկներն ու խոցերն այրում հատուկ հեղուկով, այնուհետեւ անուշահու ոծանելիքներով թարմացնում յերեսն ու զլուխը:

Նրա առանձնասենյակի մեծ պահարանը լիքն եր տարբեր ձեր ու գույնի կոստյումներով, այնպես վոր հաճախ կանգնում եր պահարանի առաջ ու յերկար ընտրություն անում... Յերբ ինքը չեր կարողանում այդ որվա համար կոստյում ընտրել, կանչում եր մոռը: Սա յել բաց եր անում Փարիզից նոր ստացած մոռգային ժուռնալն ու մատը գնում մեկն ու մեկի վրա: Սաշան այդ որը լավ հագնվեց, դուրս յեկավ փողոց և աչքը հառեց կանգնած կառքերին: Կառապաններից շատերը նրան ճանաշում եյին: Նրանք նստած տեղերըն ուղղվեցին, սանձերը ձեռքերն առան և աշխատեցին Սաշայի ուշադրությունը գրավել: Նրանք սպասում եյին Սաշայի ակնարկին: Բայց Սաշան խորա-

մանկ եր: Ամեն անգամ հեռվից դիտում եր, իր արագավաղ աչքերով ընտրում ամենափառահեղ և մաքուր կտրը, առանձին ուշադրությամբ ստուգում եր ծիերըն ու սարքը: Յեթե չեր հավանում, նա յետ եր դառնում, վոտրով անցնում եր մի տյլ հրապարակ, իր ճաշակին համապատասխան կառք նստում:

Այդ որը նա հեռու կնալու առիթ չունեցավ. նրա բախտից, հենց առաջին շարքումն եր կանգնած իրեն ծանոթ կառապանը, իր զույգ կապույտ նժույգներով, վորոնք շատ անգամ Սաշային ավտոյի արագությամբ քաղաքի մի ծայրից մյուսն են թոցըրել:

Շատ չանցած, քաղաքի այգեստանն եր սլանում մի կառք, վորի մեջ թեք ընկած՝ Սաշան հիմնում եր կապույտ նժույգների արագ վաղքով:

Ռեստորանի առաջ կանգնած Գրիշոն հեռվից տեսավ կառքը: Մի քիչ առաջ գնաց և սկսեց հետաքըրքը բությամբ դիտել. «Սաշան ե», — ասաց նա մաքումն ու իսկույն պատվիրեց սպասավորներին, վոր վերի հարկի ամենալավ սենյակում սեղան պատրաստեն:

Մի ակնթարթում կառապանն ուժգին թափով քաշեց սանձերը, քրանաթոր նժույգները թափահարեցին գլուխներն ու կանգ առան: Գրիշոն կառքից իջեցրեց Սաշային և թևանցուկ վերեի հարկն առաջնորդեց: Իրար փորպիսություն հարցնելուց հետո Գրիշոն գործի անցավ: Նա շատ լավ եր ուսումնասիրել Սաշայի ճաշակը:

— Սաշա ջան, կախեթից գինի յեմ ստացել՝ ինչպես փինչամպան, մի քիչ առաջ իմ ձեռքով թուշի գառն եմ մորթել՝ ամբողջովին յուզ... Մինչև խորոված պատրաստելը՝ կարգադրեմ, վոր ցոցիսալը (թարմ ձուկ) յե-

փեն... իսկ մինչ այդ, թե ուզում ես, թարթ ու առպուխտ կտրել տամ, մի քիչ պանիր, կանաչի և իմ այզու մատղաշ խիարներից քաղել տամ...

— Բեր, բեր, Դրիշոն չո՞ս, ինչ վոր լավ բան ունես բեր... Մի քանի լավ տղերանց ասել եմ, յերկի շուշտով կգան, այսոր լավ քեֆ պետք եւ անհնք,—ասաց Սաշան և թեք ընկած սենյակի մի անկյունում դրված մահճակալի վրա:

IV.

Կ Ո Շ Ա Ր

Այզու արեմայան կողմում բաղմած բարձր սարի կատարից շողղողում եյին արեի վերջին ճառագայթ ները, Թեթև զեփյուսից շարժվում եյին բարդիների տերենները, վորոնք հանգարտ ու մեզմ որոր եյին շըշնջում այզում քնած Գրիգորին:

— Զու-ջու-ջու...

Շուշանը մի բուռը կուտ շաղ տալով, կանչեց քուշուջ անող հավերին: Հավերը հավաքվեցին հավաքնի առաջ: Նրանք կտցահարում եյին միմյանց, յուրաքանչյուրն աշխատում եր մյուսներից շուտ հասնել, ուտել կուտը: Մի փոքրիկ ճուտ կանգնել եր հեռու և անհամարձակ նայում եր նրանց, վախենում եր, չեր մոտենում:

Մանուշակը նկատեց նրան, ձեռքի շարժումով առաջ քշեց և կարեկցաբար դիմեց մորը.

— Մայրիկ, ես ճուտի առաջն ել կուտ ածա, խեղճը վախենում ե, չի մոտենում... մեղք ե...

Շուշանը կուտ գցեց ճուտի առաջ: Յերբ ճուտը

փորձեց կտուցը մոտեցնել կուտին, հավերից մեկը վրա վաղեց, կտուցով խիեց նրա գլխին: Ճուտը ծվծվալով գնտին գլորվեց: Մանուշակը զայրացած, վոտքով խը փեց հավին ու քշեց մի կողմ:

— Տես, տես, մայրիկ, ես անտերն ինչ արեց խեղճ ճուտիկին... ձ՛ռտիկ ջան, ձ՛ռտիկ ջան, արի, արի, կեր...

Սակայն ճուտը վախեցած ավելի հեռու փախավ:

Մանուշակի պայծառ դեմքը մուայլվեց, իսկ նրա սև աչքերի մեջ արտասուլքի մանր կաթիլներ յերկացին: Նա փորձեց սև հավին բռնել, ծեծել, բայց Շուշանը չթողեց:

— Բա վոր ուժեղ ե, մեծ ե, ես խեղճ ճուտին պետք ե ծեծի, սովամահ անի՞... Թող մի եղ անիրավին մի լավ պատժեմ,—բողոքեց Մանուշակը:

— Ի՞նչ անենք, բալա ջան, աշխարհն՝ ուժեղներինն ա... մարդիկ ել, անասուններն ել, թռչուններն ել եղան են... Աշխարհի որենքն ա, ով ուժեղ ա, նա կուշտ ա,—բացատրեց Շուշանը:

Հավերն արդեն հավաքնում եյին: Շուշանը խրճիթի դռանը նստած թել եր մանում, իսկ Մանուշակը այգու ցանկապատին հննված, իր սև աչքերը հառել եր հավաքնին ու մտքում կրկնում եր.

«Ուժեղները կուշտ են, թույլերը սոված... Այո, ձիշտ ե ասում մայրիկը, մարդիկ ել եղան են»...

Այդ բոպեյին Մանուշակի ականջն ընկավ Գրիշոյի ձայնը: Հստ յերկույթին Գրիգորին եր արթնացնում թիչ հետո Գրիգորը դանակը ձեռքին, թփերից վարդեր ու ծաղիկներ եր կտրատում: Մանուշակի համար

դժվար չեր հասկանաւ, վոր Գրիշոն հյուրերի համար ծաղկեփունջ եր պատվիրել Գրիգորին:

Այգու աջ և ձախ կողմերում, ծառերի սավերների տակ փոված վարունգի, բագրիջանի, պամիդորի, լուրու, սոխի և այլ բանջարեղենի մարգերը ծածկվել եյին մախմուր կանաչով, իսկ մարգերի արանքներում ճյուղակալած թփերը զարդարվել եյին գույնզգույն ծաղիկներով ու մայիսյան վարդերով, վորոնք անուշ բուրմունք եյին տարածել իրենց շուրջը: Գրիգորի ձեռքի հոգատարությունը յերեսում եր փոքրիկ այցում:

Ռեստորանի բոլոր սեղանները գրավված եյին: Այդում յերաժիշտների նվազի հետ միասին լսվում եյին հարբած մարդկանց անճոռնի ու անկապ բացականչությունները: Ռեստորանի վերի հարկի սենյակներից մեկում, ճոխ սեղանի շուրջը նստած հյուրերն արդեն թեժ քեֆի մեջ եյին: Դուդուկի արեւելյան շոյող մեղեղիները գերել եյին նրանց: Նրանցից մեկը, աչքերը յերաժիշտների շրթունքներին հառած, մտքով աեղափոխվել եր իր տարփածույի գիրկը, մյուսն իր հարկանի վիզը գրկած հիացմունքի թեթև ժամփաներ եր շուայլում, յերբորդը ծխախոտի թանձր ծուխը բերանցից բաց թողնելով, թղթադրամներ եր թափում նվազողների առաջ...

Դրանցից մեկը, Սաշան, գլխի թեթև պտույտ ըզգաց: Ծխախոտի թանձր ծխից և գինու հոտից նեխված ողն ազգել եր նրա գինովցած ուղեղին ու սրտին: Նա գուրս յեկավ պատշգամբ: Ագահարար շնչեց այգու կենսաբույր ողը: Ցած նայեց: Նրա աչքերը տընկեցին ծաղկեփունջ կապող Գրիգորի վրա: Նա տա-

տանվելով սանդուխքներից ցած իջավ, կանգնեց այդու կենտրոնում: Յուցամատով Գրիգորին նշան արեց իրեն մոտենալ:

— Այսման, գլխի չես ընկնում, վոր կանչում եմ:
— Հրամայի, քե մատաղ, — պատասխանեց Գրիգորը:

— Եղ ծաղկեփունջն ում համար ես պատրաստում:
— Զգիտեմ, քե մատաղ, խաղելին և հրամայել:
Սաշան Գրիգորի ձեռքից վերցրեց ծաղիկները, հոտքաշեց, զուլսը շարժեց, դժկամորեն դեմքը ծոմոեց:
— Խաղելին ասաց, վոր ես հիմար ու անհոտ ծաղիկներից ծաղկեփունջ կապես...

Յեկ նա իր մանրիկ աչքերը վոլորեց, ատամներն իրար սեղմեց, սկսեց ծաղիկները արորել իր բարակ մատներով: Ծաղիկների թերթիկները ձունի խոշոր փաթիլների նման ծածկեցին Սաշայի և Գրիգորի միջն յեղած փոքրիկ տարածությունը: Սաշան իր մատին ծակոց զգաց: Վարդի փուլը խրվել եր նրա մատը, վորից արյան մի փոքրիկ գնդիկ եր դուրս պըրծել: Սաշան դույնը զցեց, յիտ-յետ քաշվեց, դեմքը մսայլեց, խեթ-խեթ նայեց և այնպես ապառակեց Գրիգորին, վոր վերջինս որորվեց:

Սաշան քրքջաց և հեգնորեն վրա բերեց.

— Տո, տնաքանդ, չես ամաչում, եղ բոյին մարդը մի խիելով կորորվի...

Գրիգորի յերեսը խարույկի նման վասվեց: Նրա աչքերը պղառվեցին: Նա բան չեր տեսնում: Նրա սիրոն այնպիսի արագությամբ եր խփում, ասես ուղում եր դուրս թոշել ընից, կոկորդը սեղմվում եր, շունչը կտրվում: Նա մեկ ուղեց հարձակվել իր կողու

ձեռքերով խեղդել, վոչնչացնել Սաշային... Բայց իսկույն սթափվեց, պահեց իրեն, հիշեց Գրիգորի նախազգուշացումը, թե՛ յեթե հյուրերի հետ կոպիտ վարվես կամ նեղացնես, դուրս կանեմ... Մի ակնթարթում հիշեց իրենց այգու առջեց ամեն որ, վոստիկանների հսկողության տակ, ձեռքերն ու վոտքերը շղթայակապ բանաթ տարվող «հանցագորներին»... Ապա Շուշանին ու Մանուշակին պատկերացրեց փողոցներում, անտերու սովոր թափառելիս...

Այգու խորքում, գետնափոր խրճիթի առաջ կանգնած, լեղապատառ Շուշանը ձեռքի շարժումով հասկացնում եր Գրիգորին, վոր հեռանա անծանոթից: Խեկացնալու տակ նստած Մանուշակը, վոր մտածում եր «ուժեղի և թույլի» մասին, հանկարծակիր յեկած, ճշալով դեպի հայրը վագեց ու պինդ գրկեց նրան:

Մանուշակի ճիշը սթափեցրեց Գրիգորին: Նա արտասուքն աչքերին, շոյելով Մանուշակի զլուխը, դեպի խրճիթ ուղղեց իր թուլացած վոտքերը:

— Վոչինչ չկա, Մանուշ ջան, ինչի՞ յես վախենում, արտասուքից խեղդվող ձայնով ասաց Գրիգորը, — են ջահելն ուղից հետս հանաք անել...

Սաշան իր կտավի աչքերով նենդորեն նայեց Մանուշակին, վավաշորեն ժպատաց և նորից դեպի պատշամբ դիմեց:

Գրիգոր մեկ ուստորանումն եր, մեկ վերի հարկի սենյակում: Նա աչքերը չորս արած, հսկում եր, վոր հյուրերը դժգոհ չմնան: Սրան-նրան վոգեռում, քաղցրը խոսքեր շո շոայլում, առաջարկած բաժակը չեր ցըր խոսքեր շո շոայլում, առաջարկած բաժակը չեր, մերժում... Սպասագորների ականջին փսփում եր, վոր հաշիվ ներկայացնելու ժամանակ վոչինչ աչքա-

թող չանեն: իսկ յեթե հյուլերից վորեն մեկը ծախսի հաշիվ եր պահանջում, Գրիշոն բարձր ձայնով ասում եր սպասավորին.

— Տանավարի հաշվիր, դրանք մեր տղաներն են, ավելի չվերցնեմ...

Սրանով Գրիշոն հասկացնում եր սպասավորին, թե՝ «վորքան կարող ես ավելի հաշվիր, դրանց քսակը հաստ ե»... Յեվ վայ են սպասավորին, վոր չեր ըմբռուի Գրիշոյի ակնարկը:

Կես գիշերն անցել եր վաղուց: Ռեստորանում բացի Գրիշոյից մարդ չկար: Այգում խոր լսություն եր տիրում: Գրիշոն այդ գիշերվա յեկամուտը հաշվից, փողերը խնամքով դասավորեց և դրեց դարակում: Առաջա նա աչք ածեց բոլոր անկյունները, դուրս յեկավ այգի, ուր խավարէ մեջ վոչինչ չտեսավ: Այնուհետեւ բարձրացավ վեր: Բաց արեց սենյակի դուռը: Այստեղ միայն Սաշան եր մահճակալի վրա թեք ընկած, աչքերը կիսաբաց: Նա դեմքը ծամածոելով, անկատ ու անհասկանալի յեղանակներ եր մոմուռմ:

— Դու դեռ չես քնել, — զարմացած հարցրեց Գրիշոն:

— Յես ու դու նորից քեֆ պետք ե անենք և մինչև վոր իմ ասածը չկատարես, եստեղից վոտքս դուրս չեմ դնի, — ասաց Սաշան և բարձին հենվելով, փորձեց բարձրանալ տեղից, ուզեց կանգնել բայց վոտքերը ծալվեցին, նորից ընկավ մահճակալի վրա, ապա նորից վոտքի կանգնեց և աթոռներին հենվելով, մոտեցավ սեղանին, բուռնցքով զարկեց ու բացականչեց.

— Խմենք...

— Աչքիս վրա, — համաձայնեց Գրիշոն:

Սաշան բաժակը բերանը տանելիս կինու կեսը թափում եր: Նա չեր կարողանում ազատ կուլ տալ հեղուկը, նրա աչքերը ծամովում և կոկորդի յերակները ձգվում եյին. նրա ստամքում այլևս տեղ չկար, բայց ճգնում եր այդ բաժակն ել տեղափորել...

Սաշան գրպանից հանեց քսակը, դուրս բերեց այնտեղից մի քանի կապոց թղթադրամ և թափեց Գրիշոյի առաջ:

Գրիշոյի խոժոռ դեմքին փայլեց ծիծաղը: Նա խակույն գրամները գրպանը դրեց, մետաքսե թաշկինակով բերանն ու բեղերը սրբեց և խոստացավ մինչեւ լուսաբաց ամեն ինչ կատարել...

— Սաղով, Գրիշո ջան, սաղով...

Սաշան ուրախ-ուրախ, քրքշալով տեղից վեր թըռուվ: Նա կընկներ հատակին, յեթե Գրիշոն խակույն ողնության չհասներ, թեից չըրներ և մահճակալին չըմոտեցներ:

Սաշան մեջքի վրա ընկավ մահճակալին:

Քիչ հետո նա խոմիում եր՝ մազերը խճճված, փողկապը ծոված, շապիկը գինու կաթիներով ներկված: Ծոված շրթունքների արանքից ծնոտի վրայով ծորում եր բերանի լորձունքն ու թըռում սպիտակ բարձը:

Այգու խորքի գետնափոք խըճիթում մղճավանջը հանգիստ չեր տալիս Գրիշորին: Նրա աչքերից չեր հեռանում Սաշան իր գեի քրքիջով: Գրիտորն իր գըզգըզված վերմակի տակ կծկված, զղածգություններ եր անում ու ինքն իրեն մտմտում. «Ինչո՞ւ մի ապտակ ել յիս չտվի, ինչո՞ւ եղ գյաղային գետնովը չտվի, վոր

իմանար, թե իր գեմը մարդ ա կանգնած, ինչու խեղդամահ չարի...

Նրա մարմինը մերթ տաքանում, մերթ սառչում եր, Արտասուբը խեղզում եր նրա կոկորդը, նա հեկեկում եր յերեխայի նման...

Այս, վորքան եր փափագում Գրիգորն այդ ըռպեցին իմանալ այն փողկապավորի ուր լինելը. կզնար, նրա գուան մոտ կսպասեր, հենց վոր գուրս գար, կը-բռներ նրա ձեռք ու վոտքից, կը արձբացներ ողի մեջ և իր ամբողջ ուժով այնպես կզարկեր գետնին, վոր նրա վոսկորների հետ միասին քարերն անդամ կփը-շրվեյին...

Յեթե այդ ըռպեյին նրա վերմակը յետ քաշեյին, աժդանա Գրիգորի տեղ մի այլանդակ զանգված կը-կտնեյին. Ծնկները մինչև ծնոտը հասցրած, յերկու ձեռքով վերմակի արանքներից թափվող բուրդը սեղմած, յետ քաշված շրթունքների արանքից տատամները գուրս ցցած, չսափրված յերեսի մազերն արցունքի անձրեսով թրջած, աչքերն արյունակալած...

Նրանից վոչ հեռու, թախտի մի ծայրին քնած Մա-նուշակը շարունակ զառանցում եր. «Ճուտիկը, մայ-րիկ, ճուտիկը... մեղք ե, սոված ե... ուժեղները .. թույլերը... տն, անտեր, մի կտցահարի»... — Նա ան-հանդիսա շարժումներ եր անում և աջ թեղով սրբում մարմարե ճակատը, վորի վրա քրտինքի մարգարտե հուլունքներ եյին կիտվում:

Միայն Շուշանն եր քնած անդորր ու անվրդով:

Ծեղը նոր եր բացվում: Գրիգորը վոտքի վրա յեր, նրա աչքերն ուսիկ եյին անքնությունից, ամբողջ մարմինը թուլացել, սիրու, կարծես, կանգ եր առել

Կրծքի տակ դատարկություն եր զգում, իսկ շնչափո-ղը բռնվել, ոդը մեծ դժվարությամբ եր անցնում նրա միջից:

Գրիգորը բանջարանոցն եր ջրում: Շուշանը հավա-քնի գուռը բացել, կուտ եր տալիս հավերին: Իսկ Մա-նուշակը, թոշնած վարդի նման, տիուր ու հոգնած, նստել եր խրճիթի առաջ և իր փայլուն աչքերով յե-րեկվա ճուտիկին եր վորոնում: Սակայն այս անգամ ճուտիկը չերեաց: Նա կուչ եր յեկել հավաքնի մի ան-կյունում, դողում եր, զլուխը կախել, կտուցը բաց ու խուփ եր անում:

Մանուշակի վորոնող աչքերն ընկան հեռվից յեկող Գրիշոյի վրա:

Գրիշոն իր բանջարանոցի յուրաքանչյուր մարդու ու թուքը ստուգեց, շվշացնելով մոտեցավ Գրիգորին, աչքերը շեշտակի հառեց նրան: Վերջինս չեր նա-յում Գրիշոյին. նա զլուխը կախ, լուռ, դույլով ջուր եր վերցնում առվից, վոր մարդերը ջրի:

— Յես քեզ չեմ ասէլ — բղավեց Գրիշոն, — վոր ճյուրերի հետ կոպիտ չպետք ե վարվել... Գրիշոը մե-կին նեղացընել ես, են ել ենպես մարդու, վոր ամբողջ քաղաքի աչքն ես...

Գրիգորը մնաց տեղում քարացած: Սաշայի տված ապակը դեռ վառում եր նրա յերեսը: Նա անհամարձակ նայեց տիրոջը, զլուխը կամաց շարժեց և հազիվ լսե-լի ձայնով ասաց.

— Ասում ես, վոր մեղավորը յես եմ... ձիշտ ես ա-սում, յես մեղավոր եմ, — ապա ատամները կրծտելով, շա-րունակեց, — յես նրա զլուխը տեղն ու տեղը պիտք ե

փշրեյի, վոր գրուստ մարդ լինեյի... Համա, դե... ի՞նչ
անեմ... ձկան նման բերանս լիքն ա...

— Ինչեր ես զուրս տալիս, — բարկացած բացա-
կանչեց Գրիշոն, — գլուխու, թե ինչ մարդու մասին հս
խոսում... Սկի նըա վոտի կեղտին չարժես... Յեթե
այդ հիմար բնավորությունդ չթողնես, իսկույն հա-
շվդ կմաքրեմ...

Կարծես Գրիգորի բերանը բամբակ խցկեցին, ել
խոսել չկարողացավ: Նա ապուշ կտրած կանգնել եր
Գրիշոյի առաջ աղերսող հայացքով, կարծես ներումն
եր խնդրում հանցավորի նման:

— Ես մարգերը թնդ, հետո կջրես, գնա գեռ փո-
ղոցի կողմից սեստորանի առաջը ջրի, վոր թողը ներս
չդա, — հրամայեց Գրիշոն:

Թեպետ քամի չեր, թող ել չկար, սակայն Գրիգո-
րը լուս, առանց խոսք ասելու, կատարեց տիրոջ հրա-
մանը:

Գրիշոն ձեռքի շարժումով կանչեց Մանուշակին:
Սա անհամարձակ քայլերով մոտեցավ և սպասեց տի-
րոջ հրամանին:

Մի տարվա ընթացքում Մանուշակը շատ եր փոխ-
վել, բոյ քշել: Նրա յերեսից չըացել եյին արևի այր-
վածքները, այտերը փայլում եյին նոր բացգող վար-
դի նման, կամար հոնքերի տակից սկորակ աչքերը
շողշողում եյին ծագող արևի ճառագայթների նման:
Նրա հստակ ճակատը, բարակ շրթունքները, հեղ հա-
յացքը գրավում եյին նայողին: Նրա թափշյա գանգուր
մազերի զույգ ծամերն իջել եյին մինչև կուրծքը:

Այդ ժամանակ Շուշանը չեր յերնում այգում, Հա-
վերին կերակրել մտել եր և ընձիթը:

Գրիշոն աչքերով իր չորս կողմը խուղարկեց և կո-
մացուկ շնչաց.

— Շուտով գնա, վերի մեծ սենյակը մաքրի և
կարգի բեր:

Առաջին անգամը չեր, վոր Գրիշոն Մանուշակին
այդպիսի պատվեր եր տալիս... Գրիշերները հյուրերով
զբաղված սենյակները Մանուշն ու Շուշանն եյին մաք-
րում լուսաբացին, յերբ հյուրերը հեռանում եյին:
Զե վոր պայմանն այդպիս եր, վորի համար Գրիշոն
վողորմածարար նրանց եր տրամադրել սեղանների վը-
րա հյուրերի թողած հացի ու մթերքի մասցրդները...
իսկ դրանք, Գրիշոյի սաելով, «փող արժեն, մի քանի
խող կարելի յե կերակրել զբանցով»...

Գրիշով ներկված հացի կտորներ, ծամծմված մսի ու
ձկան պատառներ, վարունգի կճեպներ, պանրի փլշ-
րանքներ եյին հավաքում սենյակներից Շուշանն ու
Մանուշակը, վորոնց մեծ մասը տալիս եյին Գրիշոյի
հավերին...

Մանուշակը թեքվեց դեպի խրճիթը, Գրիշոն բռնեց
սրտ թեից:

— Ուր ես գնում:

— Մայրիկիս վերցնեմ, միասին հավաքենք:

— Հարկավոր չե, միայն մի սենյակ ե, մաքրել ե
պետք... Ահագին աղջիկ ես, չես կարող մենակ անել,
վոր մեկ ել են խեղճ պառավին ես նեղություն տա-
լիս...

Գրիշոյի այս նախատինքից Մանուշակն ամաչեց և
լուռ դեպի պատշամբ ուղղվեց: Գրիշոն սանդուղքնե-
րի տակ կանգնած, մտահոգ, անշարժ աչքերով նայում
եր դեպի վեր:

Կյանքի հոբեանքում—3.

Կիսաբաց դոնից ներս մտնելիս Մանուշակի մարմով մի անսովոր սարսուռ անցավ: Սևնյակի դուռը փակվեց նրա յետեկից: Իր առաջ կանգնած ծոված փողկապով տղամարդու այլանդակ դեմքից լեղապատառ Մանուշակը փորձեց ճչալ, բայց Սաշայի ձեռքը փակեց նրա բերանը... ավիլն ընկավ Մանուշակի ձեռչքից, նրան թվաց, թե առաստաղը տարուքերվում ե... չորս կողմը խավարեց

Արեց վողողել եր պատշտամբի հատակը: Սաշան կայծակի արագությամբ սանդուղքներից իջավ, վագեց դեպի փողոց և նստեց առաջին պատահած կառքը:

Գրիշոն բարձրացավ վերեւ: Զգուշությամբ բաց արեց դուռը: Մանուշակը մահճակալի վրա նստած, փետում եր իր գանգուր մաղերը և յեղունգներով ճանկուտում յերեսը: Նրա ձիթապտուղ աչքերը խամրել, արցունքով լցվել եյին. նա հեկեկում եր խելազարի նման:

Գրիշոն խոժուեց դեմքը և այնպես գոռաց, վոր Մանուշակը հանկարծակիի յեկավ: Սարսափահար վեր ցատկեց, կանգնեց, վիզը ծռեց, աչքերը սրբեց դողդոյուն ձեռքերով,

— Ի՞նչ ես հիմար յերեխայի նման լալիս... ի՞նչ մեծ բան պատահեց... Զայնդ կտրիր... գնա, յերեսդրվա, կարգի բեր քեզ... վոչ վոքի բան չասես, թե չե կտոր-կտոր կանեմ... Անամնի:

Գրիշոյի այս սպառնալիքն ավելի սարսափեցրեց Մանուշակին: Նա ամբողջ մարմնով դողում եր և հեծկըլտում...

Այդ որվանից կոշմարը տիրեց խրճիթին:

V.

ՄԱՌԱԾ ԴԻԱԿԻ ԱՌԱՋ

Մանուշակն այլես չեր խաղում ծաղիկների ու թիթեռների հետ: Նա շարունակ լուս եր ու տխուր Խուսափում եր մարդկանցից, աշխատում եր չերևալ այսպում: Յերբ դուրս եր նայում խրճիթի նեղ ու ցածրիկ գոնից և աչքն ընկնում եր յերկհարկանի շենքին, նըրա մարմնով սարսուռ եր անցնում, նա սարսափով յետ-յետ եր քաշվում դեպի խրճիթի խորքը, կծկվում մը մի անկյունում և յերկար հեկեկում:

Դիշերները Մանուշը հանգիստ չեր քնում, շարունակ յերազում հրեց եր տեսնում: Հրեշը քրքջում, այլանդակ ծամածություններ եր անում, ապա հարձակվում եր Մանուշակի վրա, խեղում, տրորում եր նրան: Մանուշակը սարսափով փորձում եր աղատվել նրա ձեռքից, ճգում, ծկլտում եր, ապա ուժասպագորվում եր անգունդը... Նա զարթնում եր լեղապատառ, նայում եր իր շուրջը, խավարում բան չեր տեսնում: Ապա կծկվում եր մոր զրկում, գրուխը թաղում նրա ցամաքած ստիճնքների արանքում և արտասուքով քրջում նրա չորացած կուրծքը:

Գրիգորը կամաց-կամաց մաշվում եր: Նրա չոր կրծքի տակ սիրտը հետզհետե ուռչում եր, շնչափողը բանվում:

Մաքերը պաշարել եյին. նրան և հանգիստ չեյին տալիս: Նա հաճախ նստում եր այգու ցանկապատի տակ, հառաջում և ինքն իր զլիսին խփելով ասուած էել ինչացմտ յեմ... հարամ չի ես փափախն իմ զրբ-

խին... Յա յես, յա են մժեղը, վոնց ուղում են, տրուրում են...

Սակայն յերկար չտևեցին նրա տրտունջները:

Աշնան տերևաթափը սկսվել եր Յուրտոն աննկատելի հերպով թափանցում եր մարդկանց վոսկորների մեջ: Անձրևախառն քամիներն այլևս անհրապույր եյին դարձել Գրիշոյի ռեստորանն ու այգին: Յերբեմն խրախճանքի ու քեֆի լավ անկյուններից մեկը համարվող յերկհարկանի շենքը ամայի յեր դարձել Միայն Գրիշոն եր հոնքերը կիտած ներս ու դուրս անում:

Այդ որերին Գրիգորն անկողնուց բարձրանալ չըկարողացավ:

— Սաթճամ ա,—վորոշեց Շուշանը:

Ամբողջ զիշեր նա տաք ջրով տրորում եր Գրիգորի այրվող մարմինը: Մանուշակը լուս մղկտում եր ու լալիս:

— Բան չկա,—հանգստացնում եր Շուշանը, — և դիշեր կքրտնի, կլավանա...

Անցան որեր:

Գրիգորը տաքության մեջ դառանցում եր: Իսկ Մանուշակն ու Շուշանը նայում եյին նրան ու մղկտում:

Լուսադեմին քամին վոռնում եր դուրսը, Քաղաքը քաղցր քնի մեջ եր Շուշանն ու Մանուշակը Գրիգորի սառած դիակի մոտ նստած, աղեկառը լալիս եյին,

VI.

ԲՈՐՍԱՅԻ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՏԱԿ

Տարիներն իրար յետելից յեկան ու անցան: Կյանքը այդ քաղաքում մի քանի անգամ փոխվեց: Մի

քանի իշխանություններ յեկան, թալանի ու ավերի մատնեցին բնակիչներին: Բաղմաթիվ յերիտասարդներ փախան, պատսպարվեցին սարերում ու ձորերում, շատերը հուսալքվեցին ու շատերն ել կոտորվեցին:

Յերբ քաղաքն անցավ բոլցիկների ձեռքը, շատ վաճտուականներ ու պաշտօնյաներ, Շուշանին ու Մանուշակին ծանոթ աղաներ այլևս չերկացցին: Պատմում եյին, թե վոմանք աներից դուրս չեն դալիս, վոմանք թագնվել են գյուղերում, վոմանք փախել են և այն նույնը պատմում եյին Գրիշոյի մասին:

Մանուշակի ու Շուշանի համար, այնուամենայնիվ, անհասկանալի յեր, թե ինչու յեն հարուստները փախել... «Թագավորը կովում ե մի ուրիշ թագավորի հետ, ուրիշ հավատի խալխի հետ, նրանք ուզում են մեր թագավորի հողերը զավթել, մեր խալխին կոտորել... Մեր թագավորն ու մեր խալխն ել ուզում են նրանց հողերը զավթել, նրանց կոտորել... Որենք ե, հպատակները պարտավոր են գնալ կովելու թագավորի գահի ու հավատի պաշտպանության համար... Այսպես եյին հասկացրել Շուշանին՝ Գրիշոյի այգուց վոչ հեռու գտնվող չորս հարկանի տանտիրոջ կինը, վորի վացքն եր անում նա, և նույն տանը բնակվող իրավարանը, վորին «վերիլ» եյին անվանում:

Բոլորովին անհասկանալի յեր Շուշանի համար, թե ինչու միևնույն «թագավորի հող ու ջրում» ապրող մարդիկ կովում են միմյանց դեմ, ինչու գահընկեց արին թագավորին... Միթե կարելի յե առանց թագավորի յերկիր կառավարել... Հոտն առանց հովվի գայերի բաժին կդառնա, — մտածում եր նա, — աստծու բարկությունն ա, մարդիկ իրար միս են ուտում, են աշխարհը նեղ ա թվում նրանց...»

Մանուշակը շշմել եր: Դեպքերն այնքան արտք եյին հաջորդում իրար, վոր նա չեր կարողանում խոռանալ հասկանալ շարժման հյությունը: Խսկ նա շատ եր ուզում հասկանալ, ջոկել լավը վատից: Յերբ այդու պատին վորեն նոր թուղթ եյին փակցնում, նրա սիրտը կտոր-կտոր եր լինում, տանջվում եր, թե ինչու ինքը կարգալ չգիտե... Նա ամաչում եր վորեն մեկին հարցնել թե ինչ և զրված այնտեղ: Գնում, կանգնում եր նոր փակցված թղթի շուրջը հավաքված մարդկանց մոտ, ականջները սրած լսում եր սրա-նրա կարգացածը, կամ տնծանոթ մարդկանց ակնարկներից և հարց ու պատասխանից մոտավորապես իմանում եր թղթի բովանդակությունը, և իսկույն վազում եր խրճիթ ու պատմում մորը:

— Մայրիկ, ասում են, վոր բոլշեվիկները մյուսների պես չեն, սրանք մեզ պես խեղճ մարդիկ են, մեղողներու յեն յեկել... Ասում են, վոր գեռ քաղաքը պետք և մաքրեն բուրժուաներից, հետո շենացնեն խեղճերին գործ տան, բոլորս ել հավասար ապրենք...

— Դե վոր իրենք ել մեզ պես քյասիր են, ել ինչով են ոգնելու մեղ... Վոր հարուսաներ չլինեն, մեզ պես խեղճերին հված ա գործ տալու... Բան չեմ հասկանում, այ վորդի:

Կյանքի դառն փորձերը Շուշանին այնքան եյին հիսաթափերեց, վոր Մանուշակը վոչ մի բանով չեր կարողանում փոխել նրա տրամադրությունը. նրա անզոր փորձերը, կիսատպուատ հավաստիացումները Շուշանի ուժեղ դիմադրությանն եյին հանդիպում: Հետզհետեւ վատթարանում եր նրանց դրությունը

և սուր կարիքը որո-որի վրա ավելի զգալի յեր դառնում նրանց համար:

Յերբ քաղցը չոքեց նրանց խրճիթի առաջ, Մանուշակն ու Շուշանը դիմեցին իրենց հին ծանոթ տանտիրուհիների ոգնության, վորոնց լվացքն եյին անում մի ժամանակ, սակայն բոլորն ել մերժեցին: Սըրանցից մեկը հենց բակից յետ դարձրեց, տաելով.

— Ենքան արիք, վոր մեզ ել ձեր որին հացըրիք... Գնացեք, բոլշևիկները ձրի ճաշ ու հապուստ են բաժանում:

Մի ուրիշը նույնիսկ ծաղրեց, թե՝

— Իշխանությունը ձերն ե, մեղնից եք գործ խնդրում: Գնացեք ոեվկոմ, նրանք ձեզ մեր զլսին կոմիսար կնշանակեն...

* * *

Քաղաքը ծածկված եր ձյան հաստ սավանով: Բնակիչներից շատերը դեռ հորանջում եյին տաք անկողիններում. Շատերն առավոտ կանուխ ձյունը տրորելով շատպում եյին շուկա ուտելիք ճարելու, շատերն ել կես գիշերից հերթի եյին կանգնել աշխատանքի բորսայի առաջ: Ցուրտը նեղում եր սրանց: Շատերը վոտքերը խփում եյին զետնին, վազք եյին կատարում տեղում, վոմանք ել ձեռքերը բերանի գոլորշիով տաքացնում ու վազվզում հերթի մի ծայրից մյուսը: Սպասում եյին բորսայի փոքրիկ պատուհանի բացվելուն:

— Ի՞նչ կա այստեղ, լ՞նչ են ծախելու, — հարցըրեց մի քաղաքացի:

— Յերեկ մի բան կլինի ելի, — պատասխանեց հերթի կանգնածներից մեկը:

— Իսկ յեթե չգիտեք, ինչու յեք կանգնել...

— Իսկ յեթե վոչինչ չլինի, չեք ափսոսա ձեր էորդ ժամանակը:

— Միևնույն ե, ուրիշ գործ չունենք, Խորհրդային իշխանությունը մեզ նմաններին գործի չի ընդունում...

— Ի՞նչեւ, — նկատեց հերթի կանգնած մի կին, — զրանք բացի սպեկուլյացիայից ուրիշ գործ չունեն... Այստեղից անգործության վկայական ձեռք կբերին, շուկայում ազատ առևտուր կանեն...

— Այդ ձեր գործը չե, քաղաքացունի, — նեղացած պատասխանեց նորիկը, — յեթե զուք պատվական կին լինելիք առավոտ վաղ ձեր տունն ու տեղը թողած, այստեղ տղամարդկանց արանքում չեյք կանգնի...

— Անամիթ, — լսվեց յետին շարքերից:

— Ո՞վ ե այդ սպեկուլյանտը, դուրս վռնդեց՝ շարքից... Ինչու յե վիրավորում այս կնոջը...

Հերթի կանգնածների մեջ իրարանցում առաջ յեկավ, աղմուկ-աղաղակ բարձրացավ: Հերթը խառնվեց: Մի քիչ հետո ամեն մեկը փնտուում եր յր տեղը:

— Յես միքուքով տղամարդու յետին եյի կանգնած...

— Յես զամբյուղը ձեռքին կնոջ մոտ եյի կանգնած...

— Յես այստեղ եյի, զուք խլում եք իմ տեղը...

— Յես այստեղ եյի, հարցրեք այս պատվական մարդուն...

Առաջացած վայնասունը հերթից դուրս եր վաճել

Պանուշակին: Նա այս ու այն կողմն եր վազում, վորոնում եր իր առաջ կանգնած սևաղգեստ կնոջը... Հերթը քանի զնում, յերկարում եր. «Միթե այսքան անգործներ կան քաղաքում», — մտքում ասաց Մանուշակին ու նորից տեղ բռնեց աճող հերթաշարքում:

Վերջապես, բացից բորսայի պատուհանի փեղկը: Նորից իրարանցում, աղաղակ, սուլոց, բղկթոց: Մանուշակին ականջները ձեռքերով ծածկած, չհասկացավ իրարանցման պատճառը:

Փոքրիկ պատուհանի յետե նստած յերկու աշխատակիցները հերթի կանգնածներից վկայականներ մերժությունը կից և ինչ-վոր անգորրագրեր տալիս. — «Մի ամսից հետո համեցեք», — լսվում եր ներսից...

Որը կիսվել եր արդեն, մոտենում եր Մանուշակի հերթը Նրա սիրտն ուժգնորեն բարախում եր, համբքերությունը հատած, վիզը յերկարած, իրենից առաջ կանգնած կնոջ ուսերի վրայից նայում եր պատուհանից ներս:

Վերջապես, Մանուշակը զողացող ձեռքերով հանեց գրպանից խնամքով ծալած մի ինչ-վոր թուղթ և անվատահ մեկնեց գրագրին:

— Այս թուղթը մեզ հարկավոր չե, — լսվեց ներսից, — սա ինչ-վոր Գրիգորի մահվան վկայական ե... Մեղ հարկավոր ե քո նախկին աշխատանքի տեղեկանքը... Վժրտեղ ես աշխատել, քանի տարի, վժր պրոֆմիության անդամ ես...

— Յես վորբ եմ, Գրիգորն իմ հայրն եր...

— Այն, բայց զա բավական չե, յես արդեն ասա-

ցի ամեն ինչ,—հորից լսվեց պատուհանից: — Հետեւ վյալը,

Մանուշակը չեր ուզում պատուհանի մոտից հեռանալ, նա ուզում եր ասել, վոր ինքն ու իր ծնողներն աշխատել են Գրիշոյի մոտ, վոր Գրիշոն փախել ե... Բայց յետևի շաքրից լսվող բողոքներն ու արտունջներն ահարեկեցին նրան,

— Իզուր տեղը մի զբաղեցնի մարդկանց, ասմեմ են չե՛ուրեմն վերջացավ... Թող մյուսները մոտենան... Հրեցէք նրան... Մոտեցիր, ընկեր, հերթը քոնն ե...

Մանուշակի թևերը թուլացան, թուքը ցամաքեց: Նրա այտերը ձմռան այդ ցուրտ պահին այրվում եյին, նա թուղթը ծալնց, դրեց զրապանն ու մտամոլոր գուրս յիկավ բորսայի ընդարձակ բակից:

Քաղաքի նեղ ու յերկար փողոցներով անցնելիս, Մանուշակը մերթ սայթաքում, մերթ ծնկնում ընկնում եր ձյան մեջ: Նա իր շուրջը փոված ձյունից բացի ուրիշ բան չեր տեսնում: Անցնող մարդիկ նրան ստվերներ եյին թվում: Մութն ընկնելու վրա յեր, յերը Մանուշակը բռնեց զեպի: Գրիշոյի այդին տանող լայն փողոցի ուղին: Նա հիշեց, յերք առաջին անգամ այս ճանապարհով Գրիգորի ու Շուշանի հետ գնում եյին պատասխան գտնելու...

Հեռվից յերևաց Շուշանը, վոր ձեռքերը խաչած, խրճիթի առաջ կանգնած եր: Մանուշակի սիրտը մորսմոքվեց, աչքերը լցվեցին: Նրա սիրտը տրորվում, կըտըտվում եր: Շուշանը, հեռվից տեսնելով Մանուշակին, առաջ վազեց ուրախացած.

— Այ վորդի, սիրտս ջուր դառավ, առավոտից սա-ված. ծարավ, ինչ յեղար մինչև հիմա...

— Մայրիկ, դե վոր դես-դեն չընկնենք, մեղ վոչ վոք բան չի տա, — հաղիվ պատասխանից Մանուշակը և յերկու ձեռքով բռնեց իր պտտվող զլու իւը:

Նրա կոկորդը սեղմվեց, այլիս խոսել չկարողացավ: Նա իրեն հազիվ խրճիթ զցեց:

— Այ վորդի, հաղար անգամ եմ ասել, վոր տանը նստի, աղք կթափիմ, մուրացկանություն կանեմ, մեր կտոր սև հաց կճարեմ... Ընկել ես սրա-նրա խելքին, բորսաներն ես ման գալիս... Նրանք քեղ վոչ գործ կըտան, վոչ ել հաց... Իզուր ե, կխաբեն, զլխիդ մի նոր գժբախտություն կբերեն...

Մանուշակը սիրտն ավելի կսկծաց, բորբոքվեց: Նրա աչքերը լցվեցին արտասուբքով: Նա կծկվեց մոր կողքին, զլումը զրեց նրա ծնկներին և այդպես ել քնեց:

Դուրսը ձյունախառն քամին եր սուլում, վորին ձայնակցում եյին շների վոռնոցն ու զետի միալար վշուցը:

VII.

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Որն իր յերկորդ կեսն եր թեակոխում: Դուրսը ցուրտ եր: Մշուշն իջել եր այգում, և շուտով խավարն եր տիրելու շրջակայքին: Շուշանն ու Մանուշակը կիսախավար խրճիթի թախտի վրա կծկված, նայում եյին կարմիր հրավիրատոմսին, վոր նախորդ որը նըրանց տվել եր մի ջահել տղա:

— Բա վոր մենք կնանք, ինչ պետք ե ասենք, մայրիկ, հարցրեց Մանուշակը միամտարար:

— Ինչ կա, վոր ինչ ասենք, քե մատաղ. ես մի-

քոխին ա, թե վոր սրանից ել կզրկեն, ջուրը թափվեցու կդառնանք... ևս ցուրտ ղիամաթին ուր գնանք:

— Զե, մայրիկ,— հանգստացը Եանուշակը, — բա ևս թուղթը տվող տղնն չասեց, վոր թե ես այդիները միացնեն՝ մեզ ավելի լավ տուն կտան... Այ, կտեսնես, թե եղած չլինի...

Մի փոքր հետո յերկուսով զուրս յեկան խրճիթից ու գեպի փողոցը տանող նեղիկ արանետը բռնեցին:

Կաղուց եր, վոր Մանուշակը չեր անցել այդ արանետով: Կիսաթափարում նրա աչքն ընկավ յերկու խռչոր ու ժանգուտած փականքներով փակված ռեսուրանի ու նրա վերի հարկի վրա... Մանուշակի աչքերը մթաքնեցին, նրա մտքով անցավ մայիսյան առավոտը. ապա նրա շուրջը հրեշների նման պար բռնեցին Գրիշոն ու Սաշան: Նա կանգ առավ այնտեղ, ուր Սաշան ապատկեց Գրիգորին:

Հենվեց ծառին: Նրա մտքի թելը կտրվեց: Այդու չորացած ծառերը, կարծես, պտտվեցին, պար բռնեցին, նախկին կանաչ մարգերի ու ծաղկագարդ թփերի տեղ բռսած ցից փշերն ու տատասկը կախվեցին նրա վեշրից... Մանուշակն ուժասպառ ընկավ գետին:

Շուշանը լեղապատառ ճաց, սկսեց տրոլել Մանուշակի ձեռքերը, ճակատը, թերից բարձրացրեց: Մանուշակը սթափվեց, վոտքի յելավ:

— Ինչի՞ յես տունս քանդում, Մանուշ ջան, — լացակումած ասաց Շուշանը, — ջանդամը, ինչ յեղել ա, մոռացիր ամեն ինչ, բայտ ջան, իմ որը սև մի անի...:

Շուշանը Մանուշակի թերից բռնած ուզեց գեպի խրճիթը տանել, բայց Մանուշակը նորից կանգ առավ:

— Մայրիկ, մենք մւր եյինք գնում... Դե, գնանք ինչմէ յես յետ դարձնում...

— Զե, քե մատաղ, եղ հալի վժնց կդաս...

— Ե, մայրիկ, վոշինչ, լավ եմ..., գնանք,

Մթության մեջ յերկու ստվերներ մոտեցան մէջ մեծ դարբասի, վորի մոտ կանգնած պահակը զլիսով հարցական նշան արեց:

Շուշանն ու Մանուշակը վախեցան, բայց շուտով Մանուշակը մտաքերեց գրպանի հրավիրատոմսը, հանց և մեկնեց պահակին: Վերջինս հանդարա բաց արեց գուռը և ցույց տվեց ժողովի սրանի մուտքը:

Նրանք անվստահ բաց արին սրանի դուռը: Զգուշությամբ ներս մտան, նայեցին իրենց չորս կողմը՝ Բոլոր տեղերը գրավված եյին: Նրանք անցան յետեր ջարքերն ու տեղ բռնեցին յերկար նստարաններից մեկի ծայրին:

Տիրում եր խոր լուսություն, Փոքրիկ բեմի կենտրոնում, կարմիր սփռոցով ծածկված սեղանին շուրջը նըստածներից մեկը վեր կացավ և խոսեց մի քանի րոպե: Նրա խոսքերը չհասան Շուշանի և Մանուշակի ականջին: Ապա սեղանի մոտ կանգնեց մի բարձրահասակ, յերեսն ածիլած տղամարդ: Նրա չեչոտ դեմքը Շուշանին ինչ վոր մի հեռավոր ծանոթի հիշեցրեց: Նա աչքերը հասեց նորեկին, վոտքից զլուխ զննեց, ապա ավելի լոյն բաց արեց իր շաղվող աչքերը և աշխատեց վորոշել նրա ովլ լինելը. «Թե նա յա, ախր նա բեղ ու միրքով եր... եսքան վժնց կփոխվեր, — մտածեց Շուշանը,

— Ընկերներ, — սկսեց հոետորը:

Նրա ձայնից Շուշանն իր տեղից վեր ցատկեց:

Սիրտն անսովոր ջերմություն զդաց: Ուրախության արտասուքով լի աչքերը դեպի Մանուշակը դարձնելով, ասաց.

— Նա յա, նա, Մանուշ ջան...

Մանուշակը, վոր մինչ այդ իր չորս կողմը ծովացած գլուխներին և պատերին եր նայում, հանկարծ ուրախությունից ուկեց փաթաթվել մորը, բայց զգաստացավ, յերբ տեսավ, վոր իր շուրջը նստածները շեշտակի նայում են իրեն: Նա իր տեղում ուղղվեց, վեցը յերկարացրեց և աչքն այլևս չհեռացրեց Սարգսի յերեսից:

Սարգսի յուրաքանչյուր խոսքն արճճի ծանրությամբ իջնում եր առողիտորիայի վրա: Նրա խոսքը սուր եր և հատու, ձայնը՝ վճռական: Թեպետ նրա ասածների միջ Մանուշակի և Շուշանի համար նոր և անհասկանալի բաներ շատ կային, այնուամենայնիվ յերկուսով ել լարվիր, զմայլվել եյին, կլանում եյին նրա յուրաքանչյուր բառը: Յերկուսի զեմքերն ել փայլում եյին անհուն բերկրանքից:

— Այո, այգիները պետք եմ միացնել, ակումբ կառւցել, այնտեղ մարդավայել հանգիստ կազմակերպել, մեր յերեխաների համար կուլտուրական անկյուններ կառուցել:

Սարգսի շարունակում եր իր խոսքն ավելի թափով, վառում եր հարյուրավոր ունկնդիրների սիրար, վարակում նրանց իր գոգերության կրակով:

Շուշանը հիպնոզացավ: Նրա միտքը սկսեց վորոտեսողությունը: Մշուշապատ շղարշի յետե մի ինչ-վոր առվել եր շարժվում: Շուշանի ականջին են հասնուա

Սարգսի խոսքների խուլ արձագանքները միայն: Ածիւ-ված հոետորի տեղ Շուշանը տեսնում եւ 15 տարի առ ուշ զյուղի տերերի հայածանքների ու զրկանքների յերեսից քաղաք մեկնող յերիտասարդ Սարգսին, բարակ բեղով, նորածիլ մախմուր մորուսով, խոհեմ աչքերով, պատառուտված արխալուզով, մաշված տրեխներով... Նա փաթաթվում եւ իր մորեղբորը՝ Դրիգուքին. յերկուսով լալիս են, յերկուսով ել աշխատում են միմյանցից ծածկել իրենց արտասուքները, համբուրգում են... Սարգսին համբուրում եւ Շուշանին ու ՀՀԸՆ-ջում նրա ականջին: «Ամագդ հալալ արա, Շուշան բաջիք... Շուշանը համբուրում եւ Սարգսի ճակատը... Ապա Սարգիսը գրկում եւ յերեք տարեկան թմբիկ Մանուշակին... Շուշանն արտասուքը սրբելով, յերկու հաց և շակին... Շուշանն արտասուքը սրբելով, յերկու հաց և նոր քամած մածուն և փաթաթում Սարգսի թաշկինակում ճանապարհին ուտելու համար...»

Ծափերի տարափը կտրում եւ Շուշանի մտքի թելու Նա սթափվում եւ շշմածի նման աչքերը թարթելով վորոնում եւ Սարգսին: Սարգսին այլևս չի խոսում: Ամբողջ գահիմ վոտքի վրա յե, անսովոր աղմուկը և ծափերը խլացրել են Շուշանին: Մանուշակը հուզմունքից կարմրատակած, ծափահարում եւ ուժգին:

Քիչ հետո միջանցքով դեպի սրահի յելքն շտապով Սարգսին կանգնեցնում են յերկու կին: Միջանցքի ճրագի աղոտ լույսն ընկել եւ արտասուքից թրջված յերկու դեմքերի վրա: Շուշանի լեզուն կապվել ե, նա յերկու դեմքերի վրա: Միջանցքի աղոտ մակարով աշխատում իր աչքերով, կարոտի քացը մակարով աշխատում եւ հասկացնել Սարգսին, վոր ինքը Շուշան-բաջին ե, պողքինն ել՝ Մանուշակը... Սարգսին մի պահ նայում կողքինն ել՝ Մանուշակը, ապա թեզվում գեպի Շուշանը անծանոթ Մանուշակին, ապա թեզվում գեպի Շու-

շանը, վորի դիմադիծը ճանաչելով, ձեռքերը պարզում
եռ մի վայրկյան մնում անշարժ,

— Շուշան-բաջի...

— Շուշանը քեզ մատաղ, Սարգիս ջան...

Յերկար տարիներ իրար չտեսած բարեկամների
սրտաբուխ զրկախառնությունը հուզում, ալեկոծում և
Մանուշակի սիրու, վորը խնդալով մերթ մեկին, մերթ
մյուսին և նայում:

* * *

Այսու գետնափոր խրճիթում, մի վորքիկ, ծխա-
ցող ճրագի լույսի տակ, մինչև կես դիշեր Շուշանը
պատմում եր Սարգսին իրենց գլխով անցածը:

— Քեզ շատ վորոնեցինք, Սարգիս ջան, վողործած
հոգի Գրիգորը մինչև իր վերջին շունչը քեզ եր ձեռ
տալիս, — Վերջացրեց Շուշանը,

— Յս Ռուսաստան եյի, — զլուխը վեր բարձրաց-
նելով ասաց Սարգսիը, — ինձ վորտեղ կարող եյիք
գտնել... Գնացի մարդ գարձա, Շուշան-բաջի, բոլշևիկ-
ները իմ աշերը բաց արին...

— Զորանաս, բալա ջան, զու յել, նրանք ել... Եհ,
տեսնենք, մեր տանջված հալն ինչ ա լինելու...

— Վոչինչ, Շուշան-բաջի, — հանգստացրեց Սարգի-
սը, — լավ կլինի, դարդ մի անի... Մանուշակը գործի
կկանգնի... մի բան կանենք...

Շուշանն ու Մանուշակը մինչև այսու դուռն ու-
ղեցեցին Սարգսին, Յերբ վերադարձան, սեղանի վրա
նայեցին, ապա ժամանակով զլուխները շարժեցին ու ար-
տասվեցին:

Նրանք նստած շարունակ Սարգսից. և բոլշևիկներ-
ից եյին խոսում: Մանուշակը միշտ կրկնում եր.

— Իմ ասածը միշտ Եր, թե չե, մայրիկ, բոլշևիկ-
ները աղքատներին պաշտպանելու յեն յեկել, թե չե...

VIII.

ՀՐԱՄՈՒՐԻՉ ՄԱՅԻՍԸ

Դարձյալ մայիս ամիսն եր:

Բայց այս անգամ այլ եր մայիսը Մանուշակը
համար, գուրեկան, շրյող, հրապուրիչ ու կենսատու:

Արեկի ճառագայթներն իրենց տուաջին համբույրն
եյին տալիս կանաչ կուրծքը գուրս ցցած սարի կա-
տարին: Մեղմ քամին կամացուկ շարժում եր հաստար-
մատ ծառերի խիտ ճյուղերը զարդարող կանաչ տե-
րևները, վորոնց շոյող, անուշ սվավոցի տակ շտապում
եր Մանուշակը:

Թարմ և գուրեկան զեփյուռը շոյում եր Մանուշա-
կի հստակ ճակատը և խաղաղնում նրա թափշյա մա-
զերի նուրբ թելերը: Նա իր մեջ յերբեք այդպիսի յե-
ռանդ չեր զգացել, նա յերբեք այդպիս թեթև չեր քայ-
լել քաղաքի փողոցներով: Նրան թվում եր՝ վոչ թե
քայլում ե գետնի վրա, այլ թռչում ե ողում:

Շատ չանցած, Մանուշակը մի ծրար ձեռքին կանգ-
նած եր գործարանի մեծ բակի մուտքի գուանը: Դի-
րեկտորի առանձնասենյակը գեռ փակ եր:

Ճ-ճ-ճ-ռ-ռ-ռ... ցըմ-բա, ցըմ-բա, դըմբ-դըմբ... Փըշ-
Փըշ... զընգ-զընգ... չըկ-չըկ, չըկ-չըկ, չըկ-չըկ...

Այս անսովոր ու տարօրինակ ձայներից 22մել եր
Մանուշակը: Նա դիտեց ընդարձակ բակի չորս կողմը:

Հեռվում մի խումբ մրոտ մարդիկ շրջապատել են մեծ շուգունե կաթսան. զրանցից մի քանիսը կարծեսը մը շամարտի յեն բռնվել նրա հետ, քաշում, քաշքում ևն... կայն բացված մի դռնից յերնում և ներսում բռցավառվող կաս-կարմիր խարույկը, նրա կրակի լեզուները հրդեհել, լափել են ուզում ամբողջ շենքը. խարույկի տուաջ, բոցերի մեջ փայլում են ժարդկանց բրոնզե դեմքերը. նրանք անտարբեր են ու անվրդով, խըֆում են սալին մուրճերով, վորից թոչող հազարավոր կայծերը պարում են ողում ու չքանում բոցավառ խարույկի շողղողուն ֆոնի վրա:

Մի մեծ ծածկի տակ պտտվում ե կլոր սղոցը, մարդըն անվախ խաղում ե նրա սուր տատմերի հետ, նըռա բերանն ե տալիս հսկայական զերանը, սղոցը ծըվալով-ծղրտալով միջից ճեղքում ե զերանը տաշեղի նման և նորից պտտվում:

Դուրսը մարդիկ բոլորն ել զբաղված են, աշխատում են, վազվում և հող, յերկաթ, փայտ են փոխադրում, մի տեղ՝ քանդում են, մյուս տեղ՝ նոր պատեն բարձրացնում, մի այլ տեղ՝ սյուներ են տընկում...

Իսկ թնչ ե կատարվում ներսը, վմրտեղից են այն խուլ ձայները, վորոնցով այնքան հետաքրքրվում ե Մանուշակը: Կտեսնի՛ արդյոք Մանուշակը, թե ինչ կա այն գորշ պատերի յետե, կիսաբաց գոներից այն կողմ, իր քաղցրահնչուն ձայնը յերբեն կիսառնի՛ այդ խուլ ձայներին...

Նա աչքը հառած լայնարձակ բակի կենտրոնում տիրաբար բազմած հսկու ոեզերվարին, խորասուզվել է չարագուշակ մտքերում, նրան պատկերացավ զիրեկ-

տորը, վորպես մի առասպելական հսկա, փառահեղ կեցվածքով, այլանդակ դեմքով, խոժուած աչքերով, զարդանդ ազդող մի տղամարդկ... Ահա նա վերադարձնում ե ծրարը, արհամարհանքով ցույց ե տալիս դուռը... Մյուսները ծիծաղում են հեղնորեն, ծաղրում... Մանուշակն աղերսում ե, նրան չեն լսում...

— Մտեք, — լսկեց բաց դռնից:

Մանուշակը սթափվեց, ուղղվեց, գույնը զցած, վախեցած, կանգնեց առանձնասենյակի մի անկյունում: Գրասեղաններից մեկի մոտ նստած բարեգեմ, սափրոված, մաքուր ու պարզ հազնված միջահասակ մի տղամարդ ինչ-վոր թերթեր եր քրքրում, իսկ նրա զիմացի սեղանի տերը, ըստ յերկույթին, դեռ չեր յեկել: Մանուշակն, աչքը դատարկ սեղանին հառած՝ սպասում եր մի քիչ առաջ իր պատկերած տղամարդուն, նրա սիրտն անհանգիստ եր, նախապատրաստվում եր անհաճելի պատասխանն ընդունելուն...

— Ի՞նչ կասեք, — սիրալիր հարցրեց սափրոված տըզամարդը:

Մանուշակն այս անսպասելի հարցից մի փոքր շփոթվեց, մինչև ականջները կարմրեց, աչքերը հատակին զցեց և զգուշությամբ մեկնեց ծրարը:

Նա կարգաց նամակը և նորից գնելով ծրարի մեջ, հարցրեց Մանուշին.

— Ի՞նչ աշխատանք կարող եք տանել:

— Յես չգիտեմ, — կամացուկ պատասխանեց Մանուշը:

— Այդ գեպքում յես ձեզ կուղարկեմ տոկարնի ցեխը... Դժգոհ հո չեք, գուցի չեք կարող կամ ձեր ուժերից վեր եք գտնում, այն ժամանակ մենք ձեզ մի

ուրիշ ցեխում կտեղավորենք... Բայց, իմ կարծիքով,
դուք կարող եք, առողջ եք յերեսում... Այստեղ լավ
վարպետների ձեռքի տակ հեշտությամբ կսովորեք...

Մինչ սափրօված մարզը խոսում եր, Մանուշակը աշ-
քի տակով նսյաց նրան ու համեմատեց մի քիչ առաջ
իր պատկերած զիրեկարորի հետ. «Վորպիսի՛ տարբե-
րություն... Միթե այսպիսի հասարակ մարդիկ են դի-
բեկտորները... Ի՞նչ բարի յե, ինչպիսի մտերմական
փերաբերմունք»...

Թեակետ Մանուշակը չգիտեր և բոլորվին ծանոթ
չեր տոկարի աշխատանքին, այնուամենայնիվ, նրա
սիրտը լցվեց բերկրությամբ. Գոհունակության ժպի-
տը դեմքին, հեղարար շնչաց.

— Շատ շնորհակալ եմ... Յես կարող եմ, ցանկու-
թյուն ունիմ, լավ կաշխատիմ...

Դիրեկտորն ինչ վոր բան գրեց փոքրիկ թղթի վրա
և մեկնելով Մանուշին, սատց.

— Այս թուղթը ցեխի վարիչ Ստեփանին կտաք և
վազվանից կանցնեք գործի:

Մանուշակը խոր զլուխ տվեց: Նրա շողշողուն աշ-
քիրի մեջ դիրեկտորը տեսավ նրա ներքին աշխարհի
բուռն ալեկոծումը և անկեղծ գոհունակությունը:

IX.

ԵՐՐ ԾԱԳԵՑ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ...

Առաջին որերը Մանուշակի համար ծանր եյին: Նա
իրեն շըշապատողների հետ չեր կարողանում ազատ
խոսել, և յեթե նրան վորեն մեկը մոտենում, մի բան
եր հարցնում, նա շփոթվում եր, մինչև ականջները
կարմըում, խոսք չեր գտնում պատասխանելու:

Նա շշմածի նման նայում եր իր չորս կողմը և չեր
կարողանում հասկանալ, թե ճարյուրավոր մարդկանց
այս զանգվածն ինչ ե անում. ինչու մի խումբ մար-
դիկ պատրաստի յերկաթն ու պողպատը զցում են
ստանոկների բերանն ու անդթարար փոշի դարձ-
նում... Ավելի անգութ են վարվում անխոս մետաղի
հետ փականագործները—նրանց մուրճերի հարվածնե-
րի տակ շիկացած մետաղը ծամովում, վորովում ե,
դառնում անզոր... Նա ապշում եր, յերբ վարպետնե-
րից վորեւ մեկը ձեռքի թեթև հպումով ստիպում եր
մեքենայի անիվներին պատվել և գործի դնել հարյու-
րավոր լծակներ, վորոնք մկների նման իրենց սուր
ատամներով կրծում եյին մետաղը և իրենց շուրջը տա-
րածում նրա փշբանքները. «Ի՞նչ հրաշք ե սա,—
մտածում եր Մանուշակը, — վորտեղ ե սրա գաղտնիքը...
ովքեր են պտտեցնում այս հսկա անիվները»:

Նրա շուրջը ամեն ինչ նոր եր և անսովոր: Մար-
դիկ ձուլվում եյին մետաղի հետ: Հեքիաթային դեմքի
նման մտնում եյին կրակե խարույկների մեջ, իրենց
կոշտացած ձեռքերով տրորում, վոլորում, փշրում եյին
հին, ժանգոտած հաստ ու ամուր յերկաթները... «Ի՞ն-
չու, ի՞նչ են կառուցում», — մտածում եր Մանուշակը
և չեր կարողանում պատասխանել իր հարցին:

Այդ որերը Մանուշակը շատ անգամ կորցրեց իրենց
ցեխի մուտքը: Ըստարձակ բակի յերկարությամբ շար-
քով շարված դռները շատ քիչ եյին տարբերվում ի-
րարից, բոլորի ճակատներին համարյա միանման տա-
ռերով միաձև ցուցանակներ եյին կպած... Ո՛, վոր-
քան եր փափագում Մանուշակը ծանոթանալ այդ ցու-
ցանակների տառերին... Նա հաճախ ընկնում եր մի այլ

ցեիս, նրա՞ յերեք կողմից բացված դռներով մի քանի անդամ մտնում-յելնում եր և դարձյալ նույն տեղը գալիս... նրան թվում եր, թե շրջապատողներն իրեն են նայում, ծիծաղում իր վրա... Շփոթված վոչխարի նման կանգնում եր, նայում չորս կողմը... Յերբ տեսնում եր, վոր իրեն վոչ վոք չի նայում, բոլորն ել իրենց գործով են զբաղված, բոլորն ել իրենց ձեռքերում խաղացող մետաղներով են տարված, Մանուշակը կարմրում եր ամոթից, պատահած դռնով դուրս եր դնում, վորոնում, մինչև վոր վերջապես ընկնում եր իրենց ցեխը...

Խառատների ցեխն այնքան ել մեծ չեր, այստեղ աշխատողների թիվը, այուս ցեխների նուան, մի քանի հարյուրի չեր հասնում, ընդամենը 40—50 հոգի եյին; Սրանց մեջ շեշտված կերպով աչքի յեր ընկնում ցեխի վարիչ Ստեփանը:

Ամեն առավոտ Ստեփանը ծանոթացնում եր Մանուշակին ցեխի վորեն տեղամասի, ստանոկների և գործիքների հետ, բացատրում եր նրանց դերը:

Մի որ Ստեփանն ու Մանուշակը կանգնած եյին գետնին անխնաս կուտակված յերկաթների և անիվների կայտար առաջ, վորի շուրջը թափթված եյին ժանդուած ողակներ, լծակներ, պտուտակներ:

Ստեփանը աչքը Մանուշակի վրա դցեց և ժպտալով ասաց.

— Մանուշակ, սա գիտես ինչ ե: Սա քո ապագա ստանոկն ե...

Մանուշակը աչքերը հառեց այդ խայտարդիտ զանդվածին, բան չհասկացավ: Յերբ նա թեքվեց դեպի Ստեփանը, վերջինս արդեն կանգնած եր հարկան ստա-

նոկի տռաջ, վորի վրա գլուխը խոնարհած յերիտասարդի հետ ինչ վոր բան եր խոսում:

— Սիմոն, ասաց բարձրածայն Ստեփանը. — այ, նոր ընդունված աշտկերտներից այս ընկերը քեզ բաժին հասավ:

Մանուշակը նայեց Սիմոնին, հեղարար ժպտաց և գլուխ տվեց: Սիմոնը մոտեցավ և սեղաց նրա ձեռքը:

— Կամաց-կամաց ես ջարդված ֆրեզերը պետք ե վոտքի կանգնեցնել: Տեսնենք, ենքան վոր գլուխ եյիր տանում, բանի պետք կգմ, թէ չե...

— Դու անհոգ կաց, ընկ. Ստեփան, — հաստատակամ պատասխանեց Սիմոնը, — ենպես ստանոկ կարելի յե հավաքել եղ «ջարդից», վոր Մանուշակը պարզալով աշխատի նրա վրա...

Մանուշակի մարմնով ուրախության սարսուռ անցափ, նրա աչքերը փայլեցին: Թեպես նա վոչինչ առել չկարողացավ, բայց Սիմոնը նրա հայացքի մեջ տնսահման խնդություն տեսավ:

Մի քանի որ Մանուշակը Սիմոնի կողքին կանգնած՝ աչքը նրա ձեռքերից ու ստանոկի լեզվակներից չեր հեռացնում, ուշադրությամբ հետեւմ եր նրանց յուրաքանչյուր շարժումին:

Նա Սիմոնի ցուցմունքներով մաքրում և յուղուս եր ստանոկի մասերը, Սիմոնի պատրաստած գործիքների կիսափարբիկատները տանում, հանձնում եր հետեւյալ ստանոկին...

Մանուշակը անհանգիստ եր նա շարունակ յերագում եր իր սեփական ստանոկն ունենալ, Սիմոնի նըւան գործ կատարել:

Որին անցնում եյին աննկատ: Մանուշակը շարու-

նակ Սիմոնի ստանովին կպած, չեր հեռանում նրանից:
Մի որ Սիմոնի ստանովի կողքին կանգնած՝ Մա-
նուշակը սև կտժով մաքրում եր գետնին թափված
պտուտակները ու մանը-մունը մասերը:

Վորքան անբախտ եր այն ստանովը, վորի մասերն
այժմ Մանուշակը սրբում եր խնամքով:

Դեռ ևս հին խազեյինի որոք կոտրվել եր նրա բա-
րաբանը: Խորհրդայնացումից հետո, յերբ մի խումբ
բանվորներ դիրեկտոր Բագրատի զլսավորությամբ
կիսավեր գործարանը սկսեցին կարգի բերել բազմա-
թիվ ջարդված ստանոկներ և սեքենաներ յերեան բե-
րին: Ո՞վ եր ջարդել Քաղաքից փախչող գործարանա-
տերն ու նրա կառավարիչները, վորպեսզի բոլցեինե-
րը չողտագործեյին: Բագրատի առաջին հոգալ յեղավ
կարգի բերել ջարդվածները: Սիմոնի նման բանվորնե-
րի ոգնությամբ վերականգնեցին թեթև վերքեր ունե-
ցող ստանոկները, վորոնց շարքին եր պատկանում
նաև Սիմոնինը, վորը այժմ հմուտ ձեռքի տակ կո-
պիտ մետաղից այնքան նուրբ ու գեղեցիկ մասեր եր
կերտում: Իսկ ծանր վերքեր ստացած ստանոկները
քանդված և կիսաքանդ, դեռ մնում եյին անգործա-
դրելի...

Այդ քանդած, ժանդուած, այլանդակված ստանո-
կին վոչ վոք չեր մոտենում, վոչ վոք ել փորձ չեր ա-
ռանդված և կիսաքանդ, դեռ մնում եյին անգործա-

— Հալից ընկած ե, սրան վոչինչ չի ոքնի... Հար-
կավոր ե քանդել և ուտիլ ցեխն ուղարկել, — ասացին
մի անգամ վարպետները: Յեկ քանդեցին, ուղեցին ու-
Ստեփանի ձեռքը:

— Թող, մեղք ե, յես սրան ուշքի կըերեմ...
— Ի՞նչ ես խոսում, Սիմոն, ամբողջովին ինվալիդ
ե, սրանից բան գուրս չի գա, հալ չի մնացել...
Սիմոնը, գթառատ մոր նման, կակիծով նայեց
ստանոկին, ապա աղերսեց Ստեփանին.

— Քեզ ի՞նչ, յես շունչ դնեմ սրա բերանում. թե
մյուս ստանոկներից ել լավ չաշխատի, ասա՞ ամոթ
քեզ...

Սիմոնին հազիվ աջողվեց Ստեփանի համառությու-
նը կոտրել այն ել գործը դիրեկտոր Բագրատին
հասցնելուց հետո:

Հենց այդ ստանոկի մասերն եր, վոր Մանուշակը
մեկ-մեկ հանում, սրբում եր յուղոտ շորով և դարսում
պատի մոտ դրված սեղանի վրա: Յերբ վերջին բոլոն
ել մաքրեց, ուրախ-ուրախ դիմեց Սիմոնին.

— Յես վերջացրի, ընկեր Սիմոն:
— Դեռ չես սկսել, ի՞նչ վերջացրիր, — կատակով պա-
տասխանեց Սիմոնը, — դեռ քանդել ես, շինելն է զըլ-
խավորը:

Յերկրորդ որը Մանուշակը ուշիւշով հետեւում եր
Սիմոնի յուրաքանչյուր շարժումին: Սիմոնը իր առաջ
դրված ջարդված բարաբանը միացրեց, յերկծայր գըն-
դաձեւ չափանիշով մոտ տասը տեղից չափեց ու նշանա-
կեց թղթի վրա: Տոցից հանեց բարակ մետրը, միքա-
նի անգամ չափեց յերկարությունը, լայնքը, քառա-
կուսի ծայրերը: Ապա կանչեց իր մոտ ձուլարանի վար-
պետ կարապետին, մոտ մի ժամ նրա հետ խոսեց, բա-
ցարեց, նորից չափ ու ձև արեց...

— Վարպետ Կարո, ենպես ես ձուլելու, վոր ար-

տասահմանի նոր բարաբանից չտարրերվի, ամենաքիչը
մի տասը տարի առանց սեմոնտի պետք ե պտտվի:

Մանուշակի ուրախությանը չափ չկար. նա մըտ-
քում կրկնում եր՝ յես ել եմ սրանց նման վարպետ
դառնալու, յես ել եմ մարդամեջ խառնվելու... Արտա-
սուքի զույգ կաթիւներ, մարդարտի հատիկների նման,
կախվել եին նրա խոշոր աշքերից: Նա չնկատեց, թե
ինչպես ելին Սիմոնի և կարապետի շուրջը հավաքվել
ցեսի վարպետները, զավկոմի նախագահ Տիգրանը,
Քիչի քարտուղար Արսենը, վարոնք ուշադրությամբ
լսում ելին յերկուսի կարծիքները ու իրենց լրացում-
ներն անում:

— Մանուշակ, գնանք վարպետ կարոյի հետ, բա-
րաբանի մողելի զծագիրը պատրաստենք:

Սիմոնի ձայնից սթափվեց Մանուշակը, իր չորս
կողմը նայեց և լնազգորեն հետևեց կարոյին և Սիմո-
նին: Նա առաջին անգամն եր լսում «զծագիր» բառը:

Բայց բարաբանի մողել պատրաստելն այնքան ել
հեշտ բան չեր: Վարպետ կարոն հազիվ եր զծագրել
մողելը, յերբ գործարանի շշակը զիլ կանչեց:

— Ա՛խ, ափսոս, — դուրս թռավ Մանուշակի բերա-
նից:

Վարպետներն իրար նայեցին, ծիծաղեցին: Սիմոնը
մեղմ ձայնով ասաց.

— Ափսոսում Բո, Մանուշակ, վոր հանգստանա-
լու յես:

— Յես ափսոսում եմ, վոր մողելը չեմ տեսնի...

— ԶԵ, Մանուշակ, յերեք-չորս որ կտեի, դու վաղ-
վանից կտաս վարպետ կարոյի մոտ, կհետես, վոր
շուտով պատրաստի, թե չե մի քիչ «ջանջալ» ե սա...

Վերջին խոսքերը Սիմոնը ծիծաղելով ասաց, վար-
պետ կարոյին չվիրավորելու համար:

Յերեք որ Մանուշակը բարաբանի մողելից աչքը չեր
հեռացնում. հաճախ նա վարպետ կարոյի պատվերով
կանչում եր Սիմոնին, վորն ուշադրությամբ ստուգում
եր մողելը, իր չափերը համեմատում նրա հետ, ջարդ-
ված բարաբանը զնում եր նրա մեջ, զննում և իր դե-
առողություններն անում:

Բարաբանը ձուլվեց վերջապես: Սիմոնը հպարտու-
թյամբ նայում ե բարաբանին, նրա շուրջը հավաք-
ված վարպետները գովարանում են նրան: Միայն վար-
պետ Սաղաթելը հեղնորեն, իր վերին շրթունքի վրա
կիտակած հաստ բեղերը կրծոտելով՝ ասաց.

— Բան չունեք... Յերկու որ ժամանակ եմ տալիս.
Թե եղ բարաբանը յերրորդ որն աշխատի՝ յես իմ նոր
տղեն չինեմ... Եղ ե, ելի՛, զերմանական շիփորմի բա-
րաբանը քոսոտ Սիմոնի հնարածով փոխարինվեց...
Իղուր ժամանակ ու մատերիալ կորցրիք...

Սիմոնը սրտնեղած վրա բերեց.

— Դեռ մենք կտեսնենք, վարպետ Սաղաթել:

— Դու քեֆիդ կաց, Սիմոն, — սիրտ տվեց վարպետ
Ստեփանը, — բնչ կա վոր, կկոտրվի՝ նորից կշինենք...
Գիրմանացիներն ել մեղ պես մարդիկ չեն. մեր ինժե-
ներ Սոկոլովը գիրմանացի ինժեներից ինչով ե պա-
կաս... Նա շատ հավանեց Սիմոնի տված պատվերը...

— Ալսր ինձ լավ չհասկացաք, — շտապեց ուղղել Սա-
ղաթելը, — յես ուզում եյի ասել, վոր նրանց տեխնի-
կան բարձր ե, մենք չենք կարող նրանց պես լավ և
մաքուր շինել...

— Կզա ժամանակ, վոր մերը նրանցից կբարձրանա,

մի քիչ սպասիր, — ասաց զավկումի նախագահ Տիգրանը,
վոր մինչ այդ ուշադրությամբ լսում եր նրանց:

Մի առավոտ Սիմոնը գետնին չոքած, ստանոկի
ներքեմ մասի բոլտերն եր ամրացնում, իսկ Մանու-
շակը կռացած նայում եր ու մտքում կրկնում նոր ամ-
րացվող մասի անունը:

— Մեջտեղի լծակը տուր, — ասաց Սիմոնը, քըստ-
նած ճակատը մրոտ թևով սրբելով. — ի՞նչ մասի անուն
տալիս եմ, նայի՛ր՝ վորտեղ եմ ամրացնում և զրի մի
թղթի վրա:

Մանուշակը մեխիքեց տեղում, մոլորվեց: Ամոթից
կծկեց ու վոչինչ անել չկարողացավ:

— Ի՞նչ ես մոլորվել Մանուշակ, մատիտ չունես...
իս ստանոկի վրա կա, վերցրու, զրի...

Մանուշակն իր ներքեմ շրթունքներն այնպես սեղ-
մեց ատամներով, վոր ալ կարմիր արյան մի կաթիլ
դուրս թռավ ու տարածվեց նրա վերևի շրթունքի տա-
կից փայլող փղոսկրյա ատամների վրա:

Սիմոնը գլուխը վեր բարձրացրեց: Մանուշակի տա-
րորինակ տեսքից վախեցած, հարցրեց.

— Ի՞նչ ե պատահել հիվանդ հո չես...
— Վոչ... վոչինչ, վոչինչ... Յես քեզ լսում եմ
վոր մասն ես ուզում...

— Զախ կողմից յերկրորդը...

Մանուշակն իսկույն վերցրեց մի թղաչափ յերկաթ,
յերկու կողմից կլոր բացվածքներով, և մի ակնթար-

թում տվեց Սիմոնին:
— Այ, լավ նայիր, սա այս յերկու լծակների ա-
ռանքումն ե ամրացվում, վոր կոչվում ե «լեզվակ»,
պիր, — ասաց Սիմոնն ու սկսեց ամրացնել լեզվակը:

Մակայն Մանուշակը դարձյալ մոլորվեց:

Սիմոնը վերջացրեց ստանոկի ներքեմի մասը: Նա
վեր կացավ չոքած տեղից, մեջքը շակեց, ծխախոտը
վառեց, ծխեց լիաթոք: Իր սովորական ծիծաղկոտ
հայացքն ուղղեց Մանուշակին և մատով ցույց տալով
արդեն միացրած մասերը, մեղմորեն ասաց.

— Հապա մեկ-մեկ ասա սրանց անունները. — վհր
մասերն են միմյանց հետ կապված, վհրն ե շարժման
մեջ զնում մյուսներին...

Մանուշակը տվեց մի քանի անուններ, բացատրեց,
բայց մոռացավ «զեստերնիկի» անունը: Նա խորա-
սուղվեց, յերկար մտածեց, բայց չկարողացավ մա-
րերել:

— Գրածդ ուր ե, տես:

Մանուշակը աչքերը գետնին զցեց, մի պահ լուռ
մնաց, ապա շշացաց.

— Չեմ զրել:

— Ինչո՞ւ:

Մանուշակը նորից մինչև ականջները կարմրեց, ա-
մոթից աչքերը փակեց և առանց զլուխը վեր բարձ-
րացնելու, ավելի կամաց շշաց.

— Գրել չգիտեմ...

— Ել ինչո՞ւ յես ամաչում, — կարեկցաբար ասաց
Սիմոնը, — դու հո մեղավոր չես. վոչինչ, կոովորես...

Մինչ այդ, նա յենթադրում եր, թե իր անգրադի-
տության համար գործարանից կարձակեն. «Նորից
փողոց, անգործություն, — մտածում եր նա, — չար
մարդկանց հեգնանք, անգութների հալածանք»... Բայց
վոչ, նա սիրու առավ, Սիմոնի խոսքերը հուսադրեցին

Նրան. «Այս, կսովորեմ, գիշերները չեմ քնի, կսովորեմ»...

Այդ որը գրասենյակում աշխատավարձ եյին բաժանում: Սիմոնն ու Մանուշակը կանգնած եյին գանձապահի սեղանի առաջ:

— Ձեր ազգանունը, — զիմեց գանձապահը Մանուշակին:

— Յեթիմյան Մանուշակ:

— Ահա, այստեղ ստորագրեցեք, — մատը մի տողի վրա դնելով, ասաց գանձապահը:

Մանուշակը կարմրատակած շեշտակի նայեց Սիմոնի աչքերին: Սիմոնն խկույն գլխի ընկափ, վերցրեց գրիչը ու ինքը ստորագրեց Մանուշակի փոխարեն:

Գանձապահը հասկացավ: Մանուշակին առաջարկեց սիփական ձեռքով յերեք խաչ դնել Սիմոնի ստորագրության կողքին:

Մանուշակը դողալով յերեք ծուռ ու մուռ խաչ գլուխ ցույց տված տեղը, ստացավ իրեն հասանելիքն ու շտապեց տուն:

Նա ամբողջ կյանքում առաջին անգամն եր իր աշխատանքի վարձն ստանում: Այդ որը յեղակի յեր Մանուշակի և Շուշանի համար: Նրանց ուրախությանը չափ ու սահման չկար: Այդ գիշեր Մանուշակը համարյա թե չքննեց: Նա մտքում շարունակ ստանողի և Սիմոնի հետ եր խոսում: Նա այժմ գրել-կարդալ իմանալու ծարավով եր բռնված: Շարունակ գրել-կարդալ սովորելու մասին ծրագրել եր մշակում:

X.

ՅԵՐԲ ԶՈՒԼՎԵՑ ՍՏԱՆՈԿԻՆ

Մանուշակը հագնվում եր հասարակ, բայց մաքուր: Նա իր թափշա մազերը խնամքով սանրած եր գալիս գոռծարան, հագնում եր սպեց-խալաթն ու սպասում շշակին: Շշակի սուլելու հետ սկսում եր պտտվել և նրա ստանոկի անիվը:

Նա թևերը քշտած, լիքը կուրծքը և իրանը խալաթում պարուրած, կամար հոնքերը վեր քաշած, լայն աչքերը ստանոկին հառած՝ տաշում եր գլանները: Վորքան սիրուն, վորքան հմայիչ եր նա: Վորքիսի յեռանդ կար նրա մեջ, վորպիսի կորով կար նրա յերակներում:

Սակայն անընդհատ պտտվող թափանիվներից շունչ առած մյուս ստանոկներին չեր հասնում Մանուշակի ստանոկը: Նա հաճախ զգուշությամբ քաշում եր դարձալծակը, կանգնեցնում ստանոկը ու Սիմոնի ոգնությանը գիմում:

— Հը, ինչ ես վախենում, — հանգստացնում եր Սիմոնը, — դու իզմիրը ամռւր սղմի, չափը մի կորցնի, բարարանի պտույտներին հետևի... Միայն, տես, զըծից այն կողմ չանցնես...

Հաճախ Սիմոնն ինքն եր վերցնում գլանը, ամրացնում եր ստանոկին, ցույց եր տալիս տաշելու, խառառելու, հղկելու ձեւը: Մանուշակը լարված նայում եր Սիմոնի կատարած փորձերին և ուշադրությամբ լսում նրա ցուցմունքները:

Կամաց-կամաց Մանուշակն ընտելացավ ստանո-

կին, յուրացրեց նրա ամեն մի շարժումն, այնպես վոր նրա ձայնի ու ոիթմի ամենաչնչին փոփոխությունից զլիսի յեր ընկնում, թե նրա վոր մասնիկն և թուլացել իսկույն փակում եր դարձածակն ու ամրացնում վորեն պտուտակ:

Մինչև Մանուշակի գործարան ընդունվելը Սիմոնը ուրիշ աշակերտներ ել եր պատրաստել Նրանցից մեկը զավկոմի նախագահ Տիգրանն ե, վորն այժմ իր վորակով Սիմոնից պակաս վարպետ չե: Մյուսը՝ Նատաշան ե, վորն այժմ ցեխի լավորակ արտադրանք արդին արդին աշակերտներից մեկն ե միաժամանակ կին-կազմակերպիչ: Սիմոնի աշակերտներից միայն Աշոտն եր, վոր բան չկարողացավ սովորել, նա շարունակ հարբում եր, հաճախ գործից բացակայում յեկած դեպքում ել ցեխում խոռվածնություն եր անում, սրան-նրան հայհոյում, անպատճեւմ: Սիմոնը, Տիգրանը, Մտեփանը, Արսենը և Կոմիերիտ բջիջի ակախիքը շատ աշխատեցին Աշոտին ուղղել խելքի բերել բայց ապարդյուն: Վերջն այն- տեղ հասցրեց Աշոտը, վոր նրան հանեցին գործից և կոմիերիտմության շարքերից:

Սիմոնը մյուս վարպետներից տարբերվում եր նը- րանով, վոր բոլորի հետ փերաբերվում եր մտերժա- բար, առանց տրտունջի լսում եր նրանց և իր գիտե- ցած չեր թագցնում վոչվոքից: Համեստ եր և հեզ, դեմքը ծիծաղկոտ, աշխույժ: Նա ընկերասեր եր, պարզ և միենույն ժամանակ զիտակից:

Սիմոնի այս հատկությունները չեյին կարող վրի- պով մտերժացավ Սիմոնին, նրա մեջ կամաց կամաց պացմունք առաջ յեկավ դեպի Սիմոնը:

Սիմոնի մեջ այդ զգացմունքն ավելի շուտ եր դար- թել զեպի Մանուշակը: Մակայն նա շատ անգամ ծած- կում եր այդ իր սովորական կատակներով: Յերկուսի սրտերն ել կարծես խոսում եյին իրար հետ, յերկուսի զգացմունքներն ել զազտագողի բանկվում եյին, փո- թորկվում ալեկոծվող ծովի պես Յերկուսն ել զգում եյին այդ: Հաճախ նրանց աշքերն իրար եյին հան- դիպում, մի քանի վայրկյան կանդ եյի առնում և ա- պա խոնարհվում ստանոկների պտտվող բարարաննե- րի վրա:

Մանուշակը տոկարների ցեխում մի քանիսին դուր չեկավ: Հենց վոր նա սկսեց ինքնուրույն աշխատել ստանոկի վրա՝ հին տոկար Մաղաթելն ու նրա կողքի Վարդանը սկսեցին խեթ-խեթ նայել Սիմոնին ու Մա- նուշակին: Հաճախ նրանք վերցնում եյին սրանց խար- տոցները, մուրճերը և պահում իրենց պահարանում կամ զցում վորմե անկյուն:

— Թող ջանները գուրս գա, վնտուն,—ասում եր Վարդանը Մաղաթելին:

Մի որ, ընդմիջուումի ժամանակ, Մտեփանի սեղանի մոտ հավաքված զավկոմի նախագահ Տիգրանը, բջիջի քարտուղար Արսենը, կեն-կազմակերպիչ Նատաշան և Սիմոնը խսում եյին անզրագետների մասին:

— Արժե՞ յոթ հոգու համար գրսից ուսուցիչ հրա- վիրել—ասաց Տիգրանը:

— Ինչու չե, — առարկեց Արսենը:

— Ընդպամենը յոթն անզրագետ չեն... ամոթ չի մեզ համար, վոր գրսից մարդ հրավիրենք... Յեկեք սովորեցնենք... Յուրաքանչյուրս մեկի շեֆությունը վերցնենք...

— Յես համաձայն եմ, — ասաց Սիմոնը, — յես իմ
աշակերտունու շեֆությունն եմ վերցնում...

— Եդ չեղափ, Սիմոն, — վրա բերեց Ստեփանուը, —
ուրիշներն ել աչք ունեն նրա վրա... Մանուշակին
արհեստը դու սովորեցրիր, — կատակով շարունակեց
նա, — թող գրավիտությունն ել Տիգրանը սովորեցնի...

Տիգրանն ու Սիմոնը ժամացին, իսկ մյուսները
ծիծաղեցին բարձրածայն: Նրանց ծիծաղի վրա մոռե-
ցավ Արդարթելը և յերբ ծանոթացավ գրուցի բովան-
դակության հետ, խոժոռեց դեմքը, ծխախոտի ծխից
դեղնած բեղերը սրեց ու Ստեփանին նայելով ասաց.

— Գործներդ հատել ե, ընկել եք դատարկ բանե-
րի յետեից: Շատ հարկավոր ե, թե անզրագետ են...
Յես ել կարծեցի մի խերով բանի մասին եք խսում...

— Ել խերովը վհրն ե, Արդարթել, — հարցրեց Ար-
մենը, աչքով մյուսների ուշազրությունը գրավելով:

— Են ե, վոր գործարանը կանանցով եք լցնում,
ել վորտեղ ասես, վոր կանայք չեն խցկում... Ի՞նչ
սրանց բանն ե տոկարությունն ու միխանիկությու-
նը... Սրանցը կարն ու խոհանոցն ե... Մեր ցեխում
յերկուս կային, յերրորդին ել բերիք... Ավելի լավ
չե՞ց լինի, յեթե սրանց տանեյիք ճաշարան, իսկ տեղ-
ները տղամարդիկ բերեյիք...

— Դու մտքինդ պարզ ասա, վարպետ Արդարթել, —
սրտնեղած ասաց Նատաշան, — յես վոր կին եմ, մարդ
չեմ... Կանայք տղամարդկանցից ինչո՞վ են պակաս...

— Լենինն ասել ե. «Յուրաքանչյուր խոհարարու-
հի պետք ե կարողանա յերկիր կառավարել», — լրաց-
րեց Տիգրանը:

Այս խոսքերը դիպան Սաղաթելի սրտին, նա դառն
չելնանքով պատասխանեց.

— Սկս ու սպիտակը բաղանիքում կերեա... Յես
գիտեմ, վոր գրանցից բան չի դուրս գա, իզուր տեղը
տղամարդկանց հացն են կտրում...

Այդ րոպեյին Սաղաթելի ու Սիմոնի աչքերն իրար
հանդիպեցին: Սիմոնի սուր աչքերն այնպես խայթե-
ցին Սաղաթելին, վոր նա չղիմացավ և փնթփնթա-
լով, առանց յետ նայելու հեռացավ:

Սիմոնն ու Մանուշակն ընդմիջումներին միասին
եյին գնում ճաշի, մի սեղանի մոտ նստում և միասին
ել վերադառնում: Մանուշակն իր նոր գնած այրբե-
նարանն ու տետրակը մոտից չեր հեռացնում: Բացի
այն, վոր գործից հետո Սիմոնի հետ մի ժամ պարա-
պում եր, ընդմիջումներին ել աղատ բողիներն ոգտա-
գործում եր, կրկնում եր դասը, մոռացած տառի անու-
նը հարցնում Սիմոնին...

Մի ամսվա ընթացքում Մանուշակն արդին ճանա-
չեց բոլոր տառերն ու թվերը: Այս բանն ավելի կա-
տապեցրեց Սաղաթելին ու Վարդանին:

— Հը՛, Սաղաթել, ասում եմ, քիչ ե մնում Սիմոնն
իր զիխարկն ել Մանուշակի զլուխը զնի, — ասաց մի
որ Վարդանը, յերբ ցեխում վոչ վոք չկար, ճաշարա-
նից դեռ չեյին վիրագարձեր:

Սաղաթելը մոտեցավ Մանուշակի ստանոկին, սկսեց
նայել մեկ-մեկ խարտած գլանները: Նա աչքերը կատ-
վի աչքերի նման չուց, հոնքերը վեր բարձրացրեց ու
գանացած պատասխանեց Վարդանին.

— Դու զիխարկի մասին ես խոսում, իսկ Սիմոնն
արգեն իր թռերը կտրել, են քածին ե ավել... Մի ուշ-

բան տես... մի քանի ամսում ոոլիկներին և հասել...
Անպայման այս յերկուսի մեջ մի շանտղություն կա...

— Վոր շանտղություն չինի, ենպես իրար կպած
կլինեն, կարծես յերկուսի փեշերն իրար կարած և...
Հիմա ել ճաշարանում ենպես եյին իրար կպել եղ առ
նամոթները, վոր յեթե ջուր ածեյիր՝ արանքներովէ
չեր անցնի,—լրացրեց Վարդանը:

— Ո՞վ և իմացել մի քանի ամսվա աշակերտի
ձեռքն եսպես գործ տան, — զլանը մեկնելով Վարդա-
նին, շարունակեց Սաղաթելը. — հայ զիդի ժամանակ...
իմ արենստանոցում ինչպես կարող եր յերկու տարվա
աշակերտը մոտենալ ստանովին... Դեռ յերեք-չորս
տարի ձեռքի սե գործ պետք և աներ, հետո միայն
ստանովին մոտենար... Լավ վարպետ դառնալու հա-
մար հինգ տարի յեր պետք... Յես վոչ մի աշակերտի
դրանից կարճ ժամանակում չեմ սովորեցրել... Զատո
վարպետներ եյին դառնում... մարդամեջ եյին խառն-
վում, նամուս կար նըանց յերեսին, մեր զաղըն ել
իմանում եյին...

Դռան մոտ յերեացին Սիմոնն ու Մանուշակը. Սա-
ղաթելը զլանը շտապով դրեց ստանովի վրա, ուղեց
է հոանալ, Վարդանը կամաց-կամաց դեպի դուռը քայ-
լեց, ցույց տալով, իբր թե վոչինչ չի յեղել, Բայց
Սիմոնը կանգնեցրեց նըանց.

— Հը՛, վարպետներ, ինչպես եք հավանում, տես-
նում եք ջարդած ստանովի վրա Մանուշակն ինչ ոռ-
լիկներ և դուրս բերում...

— Հա, — դեմքը ծոմոելով պատասխանեց Սաղաթե-
լը, — աստված վերջը բարի անի... .

Վարդանը քթի տակ ծիծաղեց, Սիմոնն ատամներն

ֆրար սեղմեց, աչքերը վոլորեց և զլուխը շարժեց. հե-
տացող Սաղաթելի յետեկցի իսկ Մանուշակը դասն
հեգնանքով շնչաց.

— Մրիկա...

XI.

ԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

Մանուշակը ժողովներին միշտ ներկա յեր լինում,
քայց վոչինչ չեր խոսում: Նա սովորաբար նստում եր
վերջին շարքերում, ուշագրությամբ լսում խոսադնե-
քին և միայն մասնակցում քվեարկության:

Նրան տանջում եր այն միտքը, թե ինչու համա-
ր յա ամեն ժողովում միանման հարցեր են շոշափվում:
Այ, որինակ, այս ամսին յերեք անգամ կուսակցական
ոջիջի գունրաց ժողով և տեղի ունեցել, յերեք ժողո-
վում ել գործարանի հարցերն են դրվել, յերկու ան-
գամ ել զավկոմն և ընդհանուր ժողով հրավիրել և տ-
մեն անգամ նույնակն գործարանի աշխատանքներն
են քննվել...

«Ինչ լավ կլիներ, յեթե մի որ ել բնակարանի հար-
ցով զրադվեյին... մտածում եր Մանուշակը և մտա-
բերում իրենց կիսաքանդ խրճիթը:

Սակայն այսորվա ժողովը, վոր զավկոմն եր հրա-
վիրել, իբ բովանդակությամբ տարրերվում եր նա-
խորդներից: Մանուշակը այս անգամ իր սովորական
տեղը չնստեց: Նա առաջին շարքերում տեղ զրավեց
Սիմոնի կողքին:

Նա նստած տեղը չեր հանգստանում: Յերբ խոսող-
ներն իրենց ճառերն ավարտում եյին, նախագահն իր

առաջ դրած թղթին եր նայում, Մանուշակի սիրաց վեր եր թոչում, նա կարմրում եր և կորցնում մաքի թելը, այն թելը, վոր նա դիմումը՝ զավկոմի նախառահին հանձնելուց հետո՝ հինգ որ շարունակ վաթաթել եր իր ուղեղում և պատրաստվել իր տուաջին յելույթի համար:

Նրա կյանքում առաջին անգամն եր, վոր ժողովում հոլովելու յեր իր անունը, այն ել բազմամարդ ժողովում...

Մանուշակը փորձեր եր անում կենտրոնացնել իր զիխում այն, ինչ նախորոք պատրաստել եր: Մաքում կրկնում եր իր կենսազրությունը, վերհիշում զործառան մատնելու որն ու ամրսը, վերականգնում եր մոռացած անուններ և սպասում, վոր նախադահը կարդա իր դիմումը:

Սակայն նախադահը, կարծես դիտմամբ, Մանուշակի հարցը հետաձգում եր և ուրիշ հարցեր եր առաջ քաշում:

— Ընկ. Սիմոն, — ասաց տրտնջալով Մանուշակը, — իմ դիմումը հո չեն կորցրել:

Սիմոնը, վոր ուշադրությամբ լսում եր դիրեկտոր Բաղրատի ինֆորմացիան նորակառույց բանվորաշենի գրության մասին, հանկարծ շրջվեց դեպի Մանուշակն ու քաղցրաժպիտ պատասխանեց.

— Թո դիմումը ժողովի վերջումն ե քննվելու, սիրահանգստանա, դեռ լոիր Բաղրատին:

Բաղրատն իր խոսքը գեռ չեր վերջացրել յերբ անսպասելի կերպով լսվեց Սաղաթելի ձայնը հետին շարքերից:

— Դու են ասա, թե եղ նոր շենքում միշեր են

բնակվելու. յերեկվա յեկած նոր աշակերտները, վորոնց ձևոքն եք զցել ստանուկները. վաղը յեթե նորից ջարդվեն, մվ և պատասխանատու:

— Այս, յես յեմ պատասխանատու, — վրա բերեց Բաղրատը, — նոր աշակերտները չեն ջարդի, յեթե նըրանց զլսի վերեկանցնած են Սիմոնի և վոչ թե Սարդարն զլսի վերեկանցներ... Հենց եղ նորերն ու հըղաթելի նման վարպետներ... Հենց եղ նորերն ու հըղաթելի ներից լավագույնները կստանան սենյակներ:

— Ճիշտ ե, ճիշտ ե, — լավեց ամեն կողմից: Սիմոնի լուրջ զեմքի վրա քաղցր ժպիս խաղաց, իսկ Մանուշակը սրտանց ծիծակեց և վոգեորված սկսեց ծափահարել:

Սաղաթելը զայլացավ, բայց չկարողացավ վոչինչ ամսել: Նա զլուխը կախեց և յերկար ժամանակ չըտրացրեց: Նա անընդհատ ծիսում եր և ինչ վոր բան մըթմըթում ինքն իրեն:

— Հետեյալ և վերջին հարցը Մանուշակ Յեթիմյանի դիմումն ե, — խոսեց նախադահը:

Նախադահի հայտարարությունը հանկարծակի թեր բեց Մանուշակին: Նա մինչև ականջները կարմրեց, եր չորս կողմը նայեց և աշխատեց հավաքել իր ցաք ու ցըլվ մաքելը:

Դիմումը կարդալուց հետո, տեղերից մի քանի հարցեր տվին Մանուշակին:

Մանուշակը վոտքի կանգնեց և յերեսը դեպի նախադահն արած՝ սկսեց:

— Մենք մեր ամբողջ ընտանիքով աշխատել ենք...

— Յերեսդ դեպի մեզ արա, — լսվեց դահիճից: Մանուշակի մտքի թելը կտրվեց, կակազելով, մի քանի բառ ավելացրեց... Ապա մի կերպ մյուս

Հարցերին ել պատասխանեց: Նրա թուքը ցամաքել եր, լեզուն դժվար եր շարժվում բերանում: Նա փորձեց պատմել իր կենսագրությունը, բայց չկարողացավ վեր չացնել, թվիրն ու ամիսները, մարդկանց անունները շփոթեց... Նա աչքերը դահլիճի ծով զլուխներին հառած, աշխատում եր մտարերել, թե վորտեղ կանգ տռավ և միաժամանակ մտածում եր, թե ինչպես վեր ջացնի ճառը... Նա ամբողջովին քրտնել եր, զլուխը ծանրացել, սիրտը խփում եր արագորեն:

Նախաղաճը Մանուշակին առաջարկեց նստել

— Ցես քվեարկում եմ, ով համաձայն ե, վոր Մանուշակին պըսիմիության շարքերն ընդունենք, թող ձեռք բարձրացնի:

Մի ակնթարթում համարյա բոլոր ժողովականները ձեռքերը բարձրացրին վեր:

— Ուրիշն միաձայն, — ասաց Նախաղաճը:

— Վոչ, — լսվեց հետեւի շարքերից, — ույստեղ նստած Սաղաթելն ու Վարդանը ձայն չտվին, նրանք ձեռընպահ են...

Հարյուրավոր զլուխներ թեքվեցին դեպի Սաղաթելն ու Վարդանը, վորոնք հպարտ ու հաղթական հայացքով նայում եին իրար:

Մանուշակի կրծքի տակ անհուն խնդություն եր ծավալվել, յերբ նա դահլիճի դռնից դուրս յեկավ, Սիմոնը դռան առաջ սեղմեց նրա ձեռքն ու քնքար շշնջաց.

— Մանուշ ջան, շնորհավորում եմ, թույլ տուր քեզ ուղեկցեմ, մորդ ել աչքալոյս տամ...

Մանուշակը դունատվեց, զող անցավ նրա մարմով, նա մի պահ լուս մնաց: Եերիք Սիմոնն այդպիսի ա-

ուաջարկ չեր արել... Համաձայնել, արդյոք, նրա հետ, ինեւ մերժել... Իսկ յեթե նա նեղանամ... Մանուշակը ծանր հառաջեց, մոլորված ու խղճալի հայացը ձգեց Սիմոնի վրա: Այդ հայացքն ասեղի նման ծակեց Սիմոնի սիրտը: Նրա մարմնով մի սառը հոսանք անցավ, նա անթարթ աչքերով նայում եր Մանուշակին:

Թեպետ գործարանում Մանուշակը միշտ ուրախ եր, աշխարհի, նրա դեմքին միշտ անմեղ պարզություն ու խնդություն եր տիրում, բայց նրա սրտի մի անկյունում թագնված թախիծն ու վիշտը յերբեմն դրսեվորվում եյին նրա զեմքի վրա: Հանկարծ նրա աչքերը բեկովում եյին ցեխի գորշ պատերից մեկի վրա, գեմբեկովում եր վարդարձի գորշ վաղաժամ թառամած վարդի նման, քը թոշնում եր վաղաժամ թառամած հոր հոգոց եր քաշում և շարունակում աշխատանքը: Սիմոնի աչքից չեյին վրիպել այդ մոմենտները: Նա մի քանի անգամ փորձ եր արել հարցնել իմանալ նրա թախծի աղբյուրի մասին, բայց հենց վոր ուզում եր բերանը բաց անել, ներքին մի ձայն արգելում եր նրան: Նա մտածում եր՝ «զուցե այդ թախիծը նրա սրտի գաղտնիքն ե, վորը քրքրելու իրավունք չունեմ... Գուցե ծանր վշտի մի հետք ե, վորը նա չի ցանկանա բանալ մարդկանց առաջ... ինչու խաղալ նրա նուրը զգացմունքների հետ, ինչու ստիպել, ինչու վշտացնել նրան»...

Այժմ ել Սիմոնը մոլորված կանգնած եր Մանուշակի առաջ և ինքն իրեն դատավետում եր՝ «ինչու, ինչու վշտացրի»...

Մանուշակի զգայուն սիրտն իսկույն հասկացավ Սիմոնին և նա աշխատեց միամտացնել նրան...

— Ե՛, զու այլ կերպ չհասկանաս, Սիմոն... Յես

մի վորքը անհարմար զգացի, չեմ ուղում քեզ նեղություն պատճառել... Ախը չե՞ վոր դու ել հոգնած ես... մեզը իս...

Սիմոնն այլևս չուղեց վշտացնել Մանուշակին իր հարցերով. Նա իրեն բավարարված ձեւացրեց, ժողովարով ցտեսություն ասաց ու հեռացավ:

Մութն ընկնելու վրա յեր, յերբ Մանուշակը բայց արեց իրենց խրճիթի դուռը: Ներսը, թախտի վրանը ստած Շուշանն ու Սարգիսը դիմավորեցին նրան:

— Աջողությունը աջողության յետերից ե զալիս, ընկ. Սարգիս, —ուրախուրախ ասաց Մանուշակը, սեղմելով Սարգսի ձեռքը: — Յես արդեն աշխատում եմ ստանոկի վրա, կարգաւորել եմ սովորում, այսոր ել պլոփմիության շարքերն անցա...

— Այ, կեցցես, —վրա բերեց Սարգիսը, — դե մոր այդպիս ե, քաղզրազիտություն ել սովորիր, նոր կասեմ՝ Շուշանը բախտավոր ե, վոր քեզ պիս աղջիկ ե ծնել...

— Իմ դույգ աչքիս վրա, ընկ. Սարգիս, յես խոսք եմ տալիս եղ պատվերդ ել կատարել և քո առաջ պարզերես լինել...

Շուշանը նստած տեղն ուրախությունից վեր-վեր իր թոշում: Նա գողդողալով վեր կացավ տեղից, զըրեց Մանուշակին ու իր յաձաքած շրթունքներով համբուրեց նրա ճակատն ու այտերը:

— Մի քո բախտավորությունն ել տեսնեմ, Մանուշ ջան, հետո թող հանգիստ մնոնեմ... Սրտումս գարդ չմասա...

Սարգիսը կիսակատակով վրա բերեց.

— Եղ ի՞նչ բախտավորություն ե քո ցանկությունը, Շուշանը բաջի...

— Են, վոր մի լավ տղի հետ ամուսնացնենք...

Մանուշակը տիրեց, իսկ Սարգիսը ծիծաղելով վրա բերեց:

— Ե՞ն, քո տունը շինվի, Շուշան բաջի, դու եք բան ասացիր. Թող մի ասածներս կատարի, կյանք մտնի... Հիմա ել առաջվա ժամանակը չի, Շուշանը բաջի... Մանուշակն առանց մեզ իրեն համար ամուսին ել, ընկեր ել կզանի...

Մանուշակը լուս նայեց Սարգիսն և իր սրտի խորքում այնպիսի թեթևություն զգաց, ինչպես հուլիսյան արեի տապից թուլացած մարդը ազբյուրի սառը ջուրը խմելուց հետո:

Շուշանը մոլորվեց, մի պահ նայեց Մանուշակին և ընկավ անուրջների մեջ:

Ի՞նչ եր մտածում այդ բողեյին Շուշանը Նա չեր կարողանում հաշտվել այն մաքի հետ, թե Մանուշակն ամուսին, տուն-տեղ, ոջախ, յերեխաներ չպետք ե ունենա... «Ո՛, տեր ամհնակարող, բա յես իմ թոռանը չպետք ա գրկեմ... Բա Մանուշակիս գլխին տեր-ախրական չպետք ա լինի... Բա մեր ոջախի կանթեզը պետք ա հանգի... Ել ով ունեմ, ել մեմ վրա դնեմ ումուզու...»—մտածում եր Շուշանն ու պարսափում

— Մայրիկ, ճիշտ ե տսում Սարգիսը, թող զեռ յես մարդ զառնամ, այնպիսի մարդ, վոր պետքական լինեմ, այնպիսի մարդ, վոր կարողանամ կովել Քրիշոյի և Սաշայի նմանների զեմ և հաղթել վոչնչացնել նըրանց...

Հուզմունքեց խեղդվում եր Մանուշակը Վերջին խոսքերի հետ, կարծես, նրա կրծքի տակից դուրս եր

Քոչում նրա սիրտը, նրա վասվուն աչքերը ծածկվել
եցին արտասուզով, բռունցքները սեղմվել:

— Հանգիստ, հանգիստ, բալա ջան, — կարեկցու-
թյամբ տասց Շուշանը. — ո՞ւ, քարն իմ գլխին, ինչ-
պես խելքդ կտրում ա, ենպես ել արա... Միայն թե
որս չխավարացնես... Հերիք ա, ինչ վոր տանջվեցիր...

Եերբ Սարգիսը դուրս եր գնում, նա պահ մի գո-
րովանքով նայեց Մանուշակին և հանգարտ ձայնով
շնչաց.

— Հանգստացիո, դու խելոք աղջիկ ես, պետք ե
հասկացնես Շուշան-բաջուն՝ հարկավոր չե հուզվել...
Նա տանջված, հոգնած կին ե, իսկ դու նոր հս կյանք
մտնում. դեռ շատ բան կտիսնես, կսովորես, մեկ-մեկ
Շուշան-բաջուն պատմիր, նրան հասկացրու, բացատ-
րի... Այդպես չե, Շուշան-բաջիւ

— Հա, քե մատաղ, դե, ինձանում հալ չի մնացել
սոր որենքներից ել բան չեմ հասկանում... Յես հենց
կտրծում եմ, վոր առաջվա նման անտղամարդ կինն ու
անտեր վոչխարը մեկ ա...»

XII.

Փ Ո Թ Ո Ր Ի Կ

Գործարանի ընդարձակ բակում մարդկային շունչ
կեր: Միայն մեծ դուն մոտ, փայտե ծածկի տակ
պահապանն եր յետ ու առաջ քայլում հրացանը ու-
սին: Յեխերում դադարել եր աշխատանքը, մեքենա-
ներն ու ստանոկները լուռ հանգստանում եյին: Տի-
րում եր խորին լոռություն:

Ամառնվա կիզիչ արևը կամաց-կամաց ծածկվեց կու-

տակվող գորշ ամպերի տակ, վորոնք ծանրացան քիչ
առաջ արեի ճառագալթներից հրավառվող քաղաքի վը-
րա: Յերկինքը ճարճատեց, կայծակներ թքեց քաղաքի
վրա: Փշեց հյուսիսի քամին: Այրվող գետինը կլանեց
անհազորեն անձրեի առաջին կաթիլները: Անձրեւ
հետզհետե սաստկացավ, ուժեղացավ, սկսեց թմրկահա-
րել կտուրները և խլացնող աղմուկով պատեց քա-
գաքը:

Հորդ անձրեի ու հեղեղի խլացնող աղմուկը հաս-
նում եր զավկոմի փոքրիկ սենյակներից մեկում դաս-
տրապող Սիմոնին ու Մանուշակին:

— Լավ ես կարդում, Մանուշակ, միայն շտապում
ես, հարկավոր ե ուշազրություն դարձնել կետադրու-
թյան վրա, — նկատեց Սիմոնը, յերբ Մանուշակը վեր-
ջացրեց ընթերցումն ու շեշտակի նայեց նրան:

Սիմոնը գլուխը դուրս հանեց պատուհանից: Անձ-
րեի խոշոր կաթիլները թրչեցին նրա բաց զլուխը՝
Բակի միջով գետի նման հոսող ջուրը զարմացրեց
նրան:

— Անձրել մեզ պատժեց, — ասաց նա:

Մանուշակն աշնանգիստ նշաններ արեց, մոտեցակ
պատուհանին և զարմացած բացականչեց.

— Ո՞, ջրհեղեղ ե... Մեր խրճիթը կտանի...

— Զի տանի, հանգիստ կաց, շուտով կդադարիր,
յերկար չի կարող տեսել ամառային անձրեւ: Նստի,
նստի, շարունակեց Սիմոնը, բաց արա աետրդ, թե-
լադրություն գրենք:

Մանուշակը նստեց, բաց արեց տեսրակը և զրիչն
իր յերեք մատերի մեջ սեղմած սպասեց Սիմոնին:

— Վճրանեղ կանգնեցինք յերեկ, — հարցրեց Սիմոնը:

— «Նա պառկած եր հիվանդանոցում»...
Սիմոնը գրքին նայեց.

— Հա, տաս! Գրի նոր տողից՝ «Թիլաղրության շարունակություն»... Գրեցի՞ր:

— Այս:

— Դարձյալ նոր տողից. «Նրան այցելության եր յեկել Մարոն, ձեռքին մի քանի նոր գրքեր... և ընկերների կողմից վողջուններ եր բերել»:

Սիմոնի սիրաը բարախում եր անսովոր արագությամբ, նրա ձեռքերը դողում եյին, իսկ դեմքը վառվում եր հնոցի պես: Տառերը խառնվել եյին իրար, թռչուում, վազվում եյին գրքի եջի վրա...

Դուրսը շարունակում եյին աղմկել անձրեն ու քամին:

— Յես վերջացրի, — ասաց Մանուշակը, գլուխը քարձրացնելով:

Սիմոնն իր յերեսը գրքով ծածկեց և խոկոյն թեքվեց դեպի պատը: Նա մի քանի վայրկյան լոելուց հետո՝ շարունակեց զողացող ձայնով.

— «Նա բռնեց... Մանուշ... ը... ներողություն... «Նա բռնեց Մարոյի ձեռքը և ասաց»...

— Գրեցի, Սիմոն... Հետո, ի՞նչ ասաց... մի քիչ արագ թելաղրի, — նկատեց Մանուշակը և կատառով ավելացրեց, — թե չե յես քեզ թույլ թվանշան կդնեմ...

Սիմոնն իր ցամաքած շրթունքները լեզվով թրժեց, հուզունքից այրվող աչքերը հառնց Մանուշակին և շարունակեց նույն տոնով.

— Գրի. «Մեր յերկուսի սրտերն ել հասկանում են իրար...»:

Մանուշակը զարմացած միջամտեց.

— Բայց, Սիմոն, դուք թռար, զրքում այդպիսի բան չկա...

Սիմոնը զիրքը դրեց սեղանին, մոտեցավ Մանուշակին, բռնեց նրա ձեռքը: Սիմոնի շրթունքները դողում եյին, աչքերը վառվում, նա վոտքից զլուխ այրվում եր:

— Կա, Մանուշակ, կա... Այս, մեր յերկուսի սըրակերն ել հասկանում են իրար... չպետք ե թազցնել...

Մանուշակն իր ամբողջ եյությամբ ալեկոծված ծով դարձավ, վորի խելադար ալիքների ծանր զարկերի տակ ձնշվում, ճմլվում եյին նրա սիրան ու հոգին նա այյևս չեր լսում զրսում աղմկող հեղեղի խշոցն ու կայծակների ճարճատյունը: Իր ներքին հուզումը զըսպեկու փորձեր արեց, ապա քնքշաբար դիմեց Սիմոնին:

— Ի՞նչ պատահեց, Սիմոն, ի՞նչ ես տառւմ...

— Յես շատ անգամ եմ ցանկացել բաց անել սիրալըս քո առաջ... միշտ ել վախեցել եմ, թե չիինի քո մեջ զայրությ կամ վիշտ առաջացնեմ... դու հասկանում ես, Մանուշակ...

Մանուշակի սրտի փոթորիկն ավելի սաստկացավ. նրա սիրտն սկսեց ավելի ուժգին բարախել: Յերկուսն ել բռնկվել եյին հրդեհով, յերկուսի սրտերն ել այրվում եյին նրա հրե բոցերի մեջ: Յերկուսի աչքերն ել անթարթ, նետերի նսան ծակում եյին իրար, և նըրանք վոչինչ չեյին տեսնում իրենց շուրջը:

— Յես գժրախտ եմ, — շշնջաց Մանուշակը: Գլուխը դրեց Սիմոնի կրծքին և սկսեց հեկեկալ: Սիմոնը գրկեց նրան և շրթունքները մեզմորեն հպեց նրա թափշյա մազերին:

Անձրես շաբունակում եր տեղալ աղմուկով: Դործարանի պահապանը, հրացանն ուսին, յետ ու առաջ եք քայլում ծածկի տակ: Խսկ փոքրիկ սենյակում նստած Սիմոնը զլխիկոր լսում եր Մանուշակի պատմությունը.

— ...Յեվ յերբ Կայսիր բանակը քաղաք մտավ, Գրիշոն ու Սաշեն կորան: Զկան նրանք: Յես այլնու չեմ տեսել նրանց... Ա՛խ, վորքան եմ փափառում հանդիպել նրանց...

Մանուշակի շրթունքների արանքից փայլող փըղոսկրյա ատամներն իրար սեղմակիցին: Նրա աչքերից արտասուքի կաթիլներ ընկան հատակին: Նա իր ծանրացած գլուխը թեքեց, դրեց Սիմոնի ուսին:

— Նրանք կան, Մանուշակ, — նկատեց Սիմոնը, — Նրանք թագնված են ամեն տեղ, մեղ մոտ ել կան... Հարկավոր ե վնտուել, գտնել նրանց... Միթե մեր Մատաթելը քո ասած Գրիշոյի և Սաշայի հոգեւոր յեղբայրը չե... Ինչով ե նրանցից պահառ... Դրանք բոլորն ել միւնույն վահամակիցն են, տարբեր անուններով...

— Այս ամենը պատահեց գարնանը... Յես ատեցի բոլոր տղամարդկանց... Իմ կյանքի անիվը կամաց կամաց սկսեց թեքվել միայն այն ժամանակ, յերբ գործարան մտա, քեզանից շատ շնորհակալ եմ... Բոլոնությամբ գործարանն իմ կյանքի նոր արշաւույսը բաց արեց:

Մանուշակը վերջացրեց: Թաշկինակով սրբեց արցունքից այրվող աչքերը, խոր հոգոց քաշեց և ծանրացայլ դեպի սենյակի յելքն ուղղվեց:

Եերբ նրանք դուրս յեկան, անձրւն արդեն դադա-

րել եր: Զինջ յերկնակամարի վրա ծիածանն իր ատլաս ժապավենն եր փոել:

Պահապանը զլուխ տվեց նրանց և շաբունակից յետ ու առաջ քայլել:

* *

Հորդ անձրենը ավերել եր փոքրիկ խրճիթը: Ցախով ու հողով ծածկված կտուրը փլել եր: Զուրը լցվել եր խրճիթի ներսը: Մինչև դուռ սանդուխը ների բարձրությունը լճացած ջրի յերեսին լողում եյին կիսամաշ գուղաներ, փայտե զգալներ, ցնցոտիներ, ցախավեր վոր Շուշանը չեր կարողացել ժամանակին ազատել: Կտուրի մի մասի հողը թափվել եր ցած: Կիսաքանդ առաստաղից կախվել եյին փտած կոճերի ծայրերը և ճոճվում եյին ողում: Փոքրիկ զուրը ծովել եր անձրեւ վից հագեցած կտուրի ճնշումից, և նրա բաց փեղկից շարունակում եյին ներս հոսել ջրի փոքրիկ առուները:

Խրճիթից վոչ հեռու, տերեւախիտ ծառի տակ, հեղինակ ազատված իրերի կողքին, փոքրիկ նստարանի վրա նստել և Շուշանը շալի մեջ փաթաթված: Խոկ Մանուշակը և Սիմոնը գործարանի զավկոմի նախագահ Տիգրանի հետ միասին նոր կառուցված բանվորաշենի դեռ չներկված սենյակներն եյին շրջում:

— Այսպես թե այնպես, վիճելու և դիսկուսիա բանալու ժամանակ չե, Տիգրան, — ասաց Սիմոնը, — մնացել են բաց յերկնքի տակ... Այս ես յերկու սենյակն ինձ չեք հատկացրե՞ւ, յետ մեկը տալիս եմ Մանուշակին...

— Արդ դեպքում յես դեմ չեմ... ինդքեմ:

Մութն ընկել եր արդեն, յերբ իրերով

— առա ոչ մմանձադէ այս իրաւութեամբ:

բարձած սայլակը կանգ առավ դեռ չավարտված բան-
վորաշենի դուանը: Մանուշակն ու Սիմոնը փութկո-
տությամբ իրերն եյին բարձրացնում վերի հարկը,
իսկ Շուշանը թրջված շորերն եր փոռւմ պատշգամ-
քում:

Երբ աեղավորվեցին, Սիմոնն իր սովորական հե-
զությամբ դիմեց Շուշանին.

— Մայրիկ ինձ չեմ ճանաչում:

Շուշանը մտածեց, աշխատեց հիշել, թէ յերբ, կամ
վորտեղ ետևել նրան, կամ ով ե պատմել նրա մա-
սին, բայց ապարդյուն:

— Գլխի չեմ ընկնում, քեզ մատաղ:

— Մայրիկ, — հիշեցրեց Մանուշակը, — բա քեզ չեմ
պատմել իմ վարպետի մասին:

— Վույ, յես քեզ ու քու արեին մատաղ... Նոր
զվահի ընկա... Մանուշ ջան, ես քու վարպետն ա, Սի-
մոնը... Ումբրդ յերկար ըլի, Սիմոն ջան... Յես բալ-
ջեկիների վոտի տակի հողին մատաղ, մի քանի տարի
առաջ պտի յեկած ըլեյին, վոր մեզ վոտնատակ տվող-
ներին մի քիչ շուտ քշեցին...

— Ես կողքի սենյակն ել իմն ե, սայրիկ, — առաց
բավականությամբ Սիմոնը, — հարևաններ կլինենք:

Մանուշակը Սիմոնին մինչև բակի դուռն ուղեկցեց:
Մթության մեջ յերկուսի աչքերն իրար շոյեցին: Նը-
րանք քնքույշ ու քաղցր ժպիտներ փոխանակեցին:

XIII.

ՍԵՎ ԶԵՐՔԸ

Նրանք միշտ միասին եյին: Մեկն առանց մյուսի
տեղ չեր գնում: Գործարանում, ճաշարանում,

վում, թատրոնում, կինոյում միշտ միասին եյին:
Յերբ վորեւ եկսկուրսիա յեր կազմակերպվում, Մա-
նուշակն, առանց Սիմոնի գիտության, նրա ազգանունն
ել եր ցուցակ մտցնում, կամ յերբ գործարկոմը վորեւ
ներկայացման, հանդեսի տումսեր եր բաժանում Սի-
մոնը միշտ Մանուշակի համար ել եր վերցնում:

Նրանք մի որ ել ԶԱՓՍ գնացին Սարգսի հետ միա-
սին: Յերբ Զագսից տուն վերադարձան, Շուշանն ար-
գեն պատրաստել եր թեյի սեղանը, վորի շուրջը նըս-
տած սպասում եյին Սիմոնի մայրը, քույրը և մոտիկ
ընկերները:

— Շուշան բաջի, — կոտակով ասաց Սարգսիը, — յես
քեզ չեյի ասմեմ, վոր Մանուշակն առանց ինձ ու քեզ
ել իրան համար ամուսին ու ընկեր կգտնի... տեսամբ...
յես անպիտաններն ինչ ոյին խաղացին մեր գլխին...

— Որ ու ումբր ունենան յերկուսն ել... զուն ել
արժանանաս, Սարգսի ջան, — ուրախացած վրա ըերեց
Շուշանը և համբուրեց Մանուշակի ու Սիմոնի ճակա-
տը:

Այդ որից բացվեց յերկու սենյակներն իրարից
բաժանող դուռը:

Յերկու սենյակների միացումով միացան և նրանց
ընակիչների սրտերը: Թէ Շուշանը և թէ Սիմոնի մայրն
առաջվա նման մեկի անունը չեյին տալիս, այլ յեր-
կուսինը միասին: Յեթե մի քիչ ուշանում եյին՝ Շու-
շանն իսկույն Սիմոնի մորն եր հարցնում:

Վերջինս ել սովորաբար հանգստացնում եր Շուշա-
նին:

Մի գիշեր նրանք շատ ուշացան:

Այդ այն գիշերն ել, յերբ Շուշանն Եփոյին ու Սիւրանին պատմում եր իր անցյալը:

Այդ որը Մանուշակն ու Սիմոնը ընդմիջումի ժամանակ գործարանի ճաշարանում ճաշելուց հետո կըրկնում եյին որվա դասը:

Դեռ բավական ժամանակ կար մինչև շչակը: Նրանցից վոչ հեռու նստած Սաղաթելն ու Վարդանը հապենապով կերան ճաշը և դուրս գնացին: Նրանք բակից անմիջապես իրենց ցեխը չմտան: Նախ անցան դարբնոց, այնտեղից փականտգործական ցեխը, ապա միջանցքի դռնով մտան իրենց ցեխը:

— Հը, Վարդան,—հեգնանքով ասաց Սաղաթելը,—ընկերներ ենք, ասում ե, չե... խեղճ աղջիկը մի քանի անգամ արորտ ե արել, իսկ այն անամոթ Սիմոնը խոսքի տակ ու զլխին ասում եր «ընկերներ ենք»... Զինի թե հիմա ել «ընկերներ» են... Վերջը եղ գաղթականը խելքից հանեց մեր դդում Սիմոնին. մեկ ե, նրանք չեն կարող մինչև վերջ միասին ապրել...

— Հա, —ծիծաղելով հաստատեց Վարդանը:

— Դն, Վարդան, մի հոհուա, աչքդ դռանը պահի, — զգուշությամբ պատվիրեց Սաղաթելը, իսկ ինքը սկսեց Մանուշակի ստանոկի վերեի մասերը քրքրել ձեռքի դործիքով...

Յերբ ստանոկի բարաբանի յերկու ծայրերին ամրացրած պատուտակները հանեց, Սաղաթելը հազար, հասկացրեց Վարդանին, թե «պատրաստ ե»... Յերկուսն ել փութկոտությամբ նույն ճանապարհով դուրս եյին զնում, յերբ շչակը դիլ կանչեց: Նրանք շփոթվեցին: Դրսից դեպի Սաղաթելն ու Վարդանը յեկող փակա-

նագործ Լեռնը նկատեց նրանց գեմքի տարորինակ գծերը, կանգնեց:

Սաղաթելն ու Վարդանը խորհրդավոր հայացքներ փոխանակեցին. Վարդանը լուս մնաց, իսկ Սաղաթելը կակաղելով հարցըրեց Լեռնին.

— Գրասենյակից հո չե՞ս գալիս, հաշվապահն ենտեղ չի...

— Վոչ, չգիտեմ,—կասկածով պատասխանեց Լեռնն ու սկսեց իր կիսատ գործը շարունակել:

Մինչ նրանք շրջան գործելով կհասնեյին իրենց ցեխի դուռը, Միմոնն ու Մանուշակն արդեն կանգնած եյին իրենց ստանոկների առաջ:

Մանուշակն, ըստ իր սովորության, սկ կտորով սրբում եր ստանոկի մասերի վրա նստած մետաղե փոշին: Յերբ ձեռքը շփեց բարաբանին, վերջինս շարժվեց: Մանուշակն ուշագրությամբ ստուգեց և հանկարծ տեսավ, վոր բարաբանի յերկու կողմերի պտուտակները հանգած են: Խսկույն հայտնաց Սիմոնին: Մի պահ յերկուսն ել շվարեցին: Քիչ հետո ամրող ցեխը շրջապատել եր Մանուշակի ստանոկը:

— Եստեղ սկ ձեռք կա...

— Ստ պատահական բան չե, ձեռքով են հանել պտուտակները...

— Եսոր ստանոկի պտուտակներն են հանում, վաղը մեքենաները կջարդեն...

— ԴԵ հենց ջարդելու նպատակով չեն հանել...

— Պետք ե վրա հասնեյինք, վոր զլուխը ստանոկի տակ ջարդեյինք...

Իրարից խոսք խելով, հուզված, բացականչում եյին հավաքված բանվորները:

— Սուսս,—լոեցրեց ամենքին Ստեփանը, — ի՞նչ եք
զլուխներդ կորցրել, գնացեք ձեր տեղերը...

Սաղաթելն ել սրանց մեջն եր, Նա հանդիսավոր
կերպով մոտեցավ Մանուշակին, աչքերը չռած դիտեց
բարաբանն ու գուխը շարժելով ասաց.

— Կեցցես, Մանուշակ, ժամանակին ևս նկատել, թե
չե թշնամու սրտով կլինեյիր... Սատանան տանի, ով
կարող եր այսպիսի ստորոտթյուն թույլ տալ... Գուցե
դու յես հանել սրբելու համար, Մանուշակ, և մոռացել
ես ամրացնել... Ինձ ել և պատահել... ի՞նչ կա, մարդ
ենք, միռանում ենք շատ տնգամ...

Մանուշակի սրտից արյուն եր կաթում: Նա վո-
չինչ չպատասխանեց, դեմքի վրա դառն ժպիտ խա-
ղացրեց ու խոր հոգոց քաշեց:

Սիմոնը Ստեփանի սեղանի մոտ կանգնած, շարու-
նակ ծամում եր իր շրթունքները: Յերբ Սաղաթելը
հեռացավ, Սիմոնը զայրացած մոտեցավ Ստեփանի հետ
խոսող դիրեկտոր Բագրատին և բջիջի քարտուղար Ար-
մենին:

— Այլնո անկարելի յե նրան հանդուրժել: Յես
հարցը կտրուկ եմ զնում, մենք գործ ունենք մեր ա-
մենավտանգավոր թշնամու հետ...

— Ճիշտ ե ասում Սիմոնը, — ավելացրեց Ստեփա-
նը, — եղ մարդն ուղղվելու մարդ չե... Մի մարդ, վոր
պարծենում ե, թե աշակերտներին հինգական տարի
ձրի շահագործել ե, մի մարդ, վոր ցարական միապե-
տության ժամանակ բանտարկյալների զղթաներն եր
կապալով վերցրել, մի մարդ, վոր կադոյի նման տղա-
մարդուն պահնորդական բաժնի ձեռքը դրեց... Ել նը-

բան կարելի՞ յե գործարանում պահել... Յեթե շուտով
նըան դատի չտանը առաջ վմազանցոր կամքի ու Ա
— Կոնկրետ վաստակ հարկավոր, առաջարկեց Սր-
սենը, — դատարկ խոսքերը բավական չեն, առաջնորդ դա
— Յես կենդանի վաստ չեմ, յես նրա նախկին ա-
շակերտը չեմ.. Նրան իմ հինգ մատի նման գիտեմ, —
պատասխանեց Ստեփանը: ուստի ըլլյո վմաց վ
Ներկա գիպքում կարմզակք ապացնեցել վոր
պտուտակները նաև յե հանել, վերպեսզի դատավարութ
թյան ժամանակ մերկացնենք նրա անցյալը, — նկա-
տեց Բագրատը. — յեխում վոչ վոք չի յեղեր Սիմոնն
ասում ե, վոր նա ճաշելիս ե յեղել ճաշարանում...

— Այս, — նրա խոսքը կտրեց Սիմոնը, — բայց չե
վոր նա շուտ գուրս յեկավ ճաշարանից:

— Ընկեր Բագրատ, — գույնը զցած, անհանգիստ
շարժումներ անելով մոտեցավ Լեռնը, — ներողություն,
յեթե կարելի յե մի բոպե, ձեղ հետ խոսելիք ունեմ:

Բագրատը մի քանի քայլ հեռացավ Ստեփանի սե-
ղանից: Նրանք յերկուսով ինչ-վոր բան քչփչացին: Հանկարծ Բագրատը նայեց Սաղաթելի կողմը և զղա-
յին շարժումներ գործեց: Յերբ Լեռնը հեռացավ Բագր-
ատի մոտից, սա մտազրազ մոտեցավ սեղանին և ա-
ռանց խոսակիցների հարցին սպասելու, ասաց.

— Դուք ճշմարիտ եք ասում, նրա և Վարդանի գոր-
ծըն ե... Լեռնը հիմա ասաց, վոր նրանց տեսել ե շը-
փոթված գուրս գնալիս... Այդ մասին այլս յերկու
կարծիք լինել չի կարող...

Ամենքը մնացին անշարժ կանգնած: Ստանոկների
խլացնող ձայները, կարծես, միալար կրկնում եյին
Սաղաթելի անունը:

Արդ գիշեր գործարանի կուսակցական կազմակերպության բյուրոն քննում եր այդ որվա դեպքը։ Նիստը վերջացավ ուշ գիշերին։

* * *

Մի քանի որից հետո Սաղաթելն ու Կարդանը այլ ևս չերևացին գործարանում։ Շուտով լուր տարածվեց, թե յերկուսն ել նստած են ուղղիչ տանը։

ՍԵԹՈՅԻ „ԳԵՐՄԱՆՎԱՆ“

Դեպոյի նորոգման ցեխի վարպետ Առաքելը լուր ու մոլորված հենվել եր իր փոքրիկ գրասեղանին և աչքերը շեշտակի հառել նոր կազմած արձանագրությանը։ Նա դանդաղորեն գլուխը վեր բարձրացրեց և դիմեց իր առաջ կանգնած մեքենավար Սեբոյին։

— Սեթո, բաներդ բուրդ ե, բալամ, շոգեքարշը մրցությունից կընկնի, ոեմոնտը չենք հասցնի... Զաւատնիկ բոլորովին չկա պահեստում...»

— Ի՞նչ, ի՞նչ,—զարմացած հարցը եց Սեթոն, —զաւատնիկ չկամ...»

Նա վերցրեց արձանագրության պատճեննն Առաքելի սեղանի վրայից, շուր ու մուռ տվեց, սի պահ ապշեց, մի քանի անգամ կարդաց, ապա հիշեց առաջին յերկու մրցությունները, ուր իր շոգեքարշով փոխանցիկ դրոշն եր ձեռք բերել և առաջավորի համբավ շահել։

* * *

Ծանրաքարշ մարդուտային գնացքը կանգնած է կայարանի սեմաֆորի մոտ։ Սեթոն ահաբեկիչ սուլոցներով ջանում ե բանալ տալ սեմաֆորը... Գնացքն ուղեկցող ավագ կոնդուկտորը յերկար ձգված վագոնների կողքով յետ ու առաջ ե քայլում անհոգ... Նա

շատ լավ ե հասկանում յերկաթուղային կանոնները. գիծն ազատ չե, նա իրավունք չունի իր գընացքը սեմաֆորից անցկացնելու... փակ ե սեմաֆորը, ուրեմն՝ «ստուպ»:

Բայց շատ են անհանգստանում մեքենավար Սեթոն ու իր ոգնական Մացակը. նրանք շոգեքարշից շարունակ նայում են փակ սեմաֆորին ու հայնոյում.

— Տն, ձեր... ախր մեծ կայարան չի, մանյովըներ չունեք, բաց թողեք, ելի...

— Ցենք,—դիմեց Սեթոն ավագ կոնդուկտորին,— կոնդուկտորներիցդ մեկին ուղարկի, տեսնի բանն ինչումն ե...

— Դուն ել խամ մարդու պես կխոսես, ջանըմ, հալբաթ պուտը զանիտ ե... կոռուշենի խո չպիտի՞ ենինք... Ե, վժր կոնդուկտորը կես կիլոմետր վոտքով կերթաքեզի խարար ենիլու, — պատասխանեց Ցենոքն ու իր սովորական դանդաղկոտությամբ բարձրացավ վագոններից մեկի վրա, կծկվեց արգելակի մոտ և սկսեց իր սիրած յեղանակներից մեկը մոմուալ:

— Մացակ ջան, — համբերությունից գուրս գալով ասաց Սեթոն իր ոգնականին, վոր յուղամանն ու պակլին ձեռքին յուղում եր շոգեքարշի էժակները; Դու վոտքդ չփոխես, յես վազեմ կայարան:

Ու նա պատանու աշխուժությամբ վարձ ցատկեց շոգեքարշից, վերցրեց լապտերն ու վազեց դեպի կայարան: Դեռ կայարան չհասած՝ նայեց ոլաքավարի տնակի բաց դռնից ներս. ոլաքավարը վկար, կայարանի պլատֆորմում մեռելային ախտորոշումների տիրում, մարդ չկար. գաղայինաշապտերի ռաֆերայնաւոգայթների շուրջը մանր սեմաֆորներն ուղամ մոծակներն

մ ջառա ու ունչ խոցրով դդմ

եյին պար բռնել. Մտավ դահլիճ: Այստեղ մարդատար գնացքից յետ մասցած մի քանի գյուղացի իրար կըպել, կծկվել եյին յերկար աթոռի վրա, սպասում եյին առավտովագնացքին: Ապա բացեց դահլիճի աջ դռուոը, վոր դեպի կայարանապետի ու հերթապահի սենյակն եր տանում: Կայարանի հերթապահի դռան մեջտեղում Սեթոն մեխված մնաց:

— Վայ, քո պահողի հերն անի...

Սեթոյի զայրությով լի զիլ ձայնից հերթապահը վեր թռավ պառկած տեղից, աչքերը տրորեց և խելագարի նման սկսեց փնտուել իր կարմիր գլխարկին ու ձեռքի լամպը... Մոտեցավ հեռախոսին.

— Ա 200-ը հասավ... (աչքը ժամացույցին հառեց) ժամը 24—25-րն... (դիմեց Սեթոյին)... Իսկ գու ինչու ուշացար, տնըը ժեղլը...

— Տո, զուտումնազ, մի խելքդ գլուխոդ հավաքի, վհր ժեղլի մասին ես խոսում, յերբ սեմաֆորդ հափակ ա...

Հերթապահն իսկույն մյուս հեռախոսի փողը վերցրեց.

— Բնուդկա, սլաքավար, սլաքավար... մեռած և տնաքանդը...

— Դե վոր հերթապահը քնած ե, զարմանալու չե, յեթե սլաքավարն ել մեռնի, — հեղնանքով ասաց Սեթոն ու ինքը վազեց դեպի սլաքը, բաց արեց սեմաֆորն ու ընդունեց գնացքը...

— Բա գուք խիզ ու ամոթ չունեք, բա ձեր մեջթասիր չկմ, եղան եք աջակցում մեր փոխարումներին... Ցես ամեն մի ըովեն ատամներովս պահեմ, գուք ինձ սեմաֆորի մոտ մի ժամ կանգնեցնեք... Հի-

ժա պետք և «նագոն» անեմ, պարավողի հոգին հանեմ... թու, ձեր...

Քանի՛, քանի՛ դեպքեր վերհշեց Սեթոն, յերբ անսպատակ ուշացումները նա իր «նագոններով» եր ծածկել, և... նախորդ յերկու մրցումների հանրազումարի ժամանակ զբաֆիկի խախտման վոչ մի դեպք չեր ունեցել:

Ահա, լեռնանցքի ուղեմասը: Սեթոյի շոգեքարշը տնքալով շնչակտուր բարձրացնում և 800 տոննանոց գնացքը: Ինքը լծակը ձեռքին մերթ յետ, մերթ առաջ շարժվելով բաց և թողնում շոգեքարշի աղիքներում կուտակված շոգին, աղատում նրա շնչափողն ավելորդ գոլորշուց, նոր սնունդ և տալիս նրա թոքերին ու առաջ շարժում «քյոհանին»... Նրա ոգնական Մացակը կայարանում իջնում ե, յուղում անիմների, փողերի, վտուլկաների պտուտակները, տուփերը, խնամքով սըրբում, մաքրում ե, ապա բարձրանում տենդերի վրա, զննում, ստուգում և մազութատար անցքերն ու խողովակները...

Շոգեքարշը նորից շարժվում և աղմուկով, շառաչով, ուժեղ ցնցումով իրար զարկում վագոնների տարեկաները, ապա զիլ ձգում վագոններն իրար կապող հաստ, յերկտակ շղթաները... պտտվում են անիմները, և ուրախ ու զվարթ սլանում և հարյուրավոր տոնն ընոներ շալակած գնացքը:

Վագոնների յերկու կողմերից հանկարծ յերեսում են քամու հոսանքից Փռֆուացող կարմիր գրողակներ... Սեթոն ու Մացակը ահարեկված՝ մեկը ձեռքի շարժումով արգելակն և փակում, մյուսը՝ մի ակնթարթում

սիզնալը կիսատ սուլում, լծակը շրջում. հնագանդվում է «քյոհանը», կանգնում և ու մոնչում:

Կոնդուկտորներից մեկը հերին վազում և դեպի շուգեքարշը շնչակտուր և հիսուն քայլ հեռվից ճշում ե Սեթոյին.

— 19-րդ վագոնի ցեղերից մեկը կտրվել և. մի ձար արա, թե չե... զնացքի մի մասը յետ կփախչի...

— Սմազչիկներն ի՞նչ են անում,—հարցնում է Սեթոն:

— Ցեղը մեջտեղից և կտրվել. սմազչիկը զլուխն ի՞նչ քարովը տա:

19-րդ վագոնի շուրջն են հավաքվել յուղողներն ու կոնդուկտորները. Նրանք վիճում են այն մասին, թե ինչպես կարող եր կտրվել, հետաքրքրությամբ նայում, զննում են կոտրած շղթան... սրախռառում են... Վրայի հասնում Սեթոն ու ճշում նրանց վրա.

— Այդ խելարներ, հիմա վիճելու և սրախռառու ժամանակն է... Հանեցեք շուտով կոտրած շեպը... Յերկրուսդ յեկեք ինձ հետ, կլյուչն ու մուրճը բերեք...

Գնացքի ամենավերջին վագոնի պոչից քարշ ընկած յերկու խոշոր շղթան հանեց, բերեց ամբացրեց 19-րդ վագոնին, մյուս ծայրը միացրեց 20-րդ վագոնի պոշին: Այս ամենը Սեթոն կատարեց այնպիսի արագությամբ, զոր վիճողների ու սրախռառողների բերանները բաց մնաց: Ապա նա հաղթական ժեստով դարձավ նրանց.

— Վարն և լավ. վեճն ու խուճապը, թե գործը: Դե, յեկեք, լավ նայեցեք, արգելակները բաց պահեք...

Սեթոն բարձրացավ շոգեքարշը Լսվեց ավագ կոն-

գուկտորի սուլիչի բարակ շվոցը, նրան հաջորդեց շուգեքարշի յերկարաձիգ, բամբ ու խոպոտ սիզնալը։ Հսկան շնչեց լիաթոք, թափահարեց ու շարժվեց առաջ։

Սեթոյի ու Մացակի հայացքներն իրար հանդիպեցին, յերկուսն ել ժպտացին։ Կնացքն առանց գրաֆիկը խախտելու և անվտանգ տեղ հասավ։

Քանի՞-քանի՞ անգամ Սեթոն իր հնարագիտությամբ ու ճարպիկությամբ կես ճանապարհին ազատել և գընացքը խորտակումից։

Ահա, բաց դաշտումն են։ Շոգեքարշը, հարբուխով հիվանդի նման անսովոր փոշտաց, ոեգուլատորի ձողն իջավ։ Մացակը սփոթնեց, ահարեկված՝ հարցական նշան արեց Սեթոյին։

— Արգելակը փակիր, — պատվիրում է Սեթոն, ինքը շրջում է լծակը, կանգնեցնում «քյոհլանին»։

— Ի՞նչ ես լեղապատառ յեղել, կալոտկան և ճաքել…

— Ախը չե՞ վոր կալոտկի ոհմոնալը հիմա տնհնարե, ի՞նչ պետք և անենք…

— Բանիդ կաց, անհնար բան չկա, դործիքները բեր, մտնենք տակը, տեսնենք ինչ կա…

Յերկուսով փորսող տալով մտնում են շոգեքարշի տակ, ապա շրջվում են մեջքի վրա։ Սեթոն ազատում է կալոտկան ամուր պահող բոլտերի ճնշումից։ Մացակն իսկույն սկսում է սրբել մաքրել շոգեքարշի փորի վրա առաջացած կալոտկի թեթև կալըրվածքները։ Դուրս են հանում կալոտկան։

Սեթոյի սվերլոն մի քանի տեղից ծակում է կալոտկի շրջանակը։ Մացակը վառած փորսունկան ձեռքին ճշտությամբ կատարում է Սեթոյի պատվերները։ Կա-

լոտկան չորս կողմից ծածկվում է հալոցքով, ապա խառնվում, հղկվում, նորից յերկուսով մտնում են շոգեքարշի տակ ու ամրացնում կալոտկան։

— Տես, Սիմոն, վմրքան կանգնեցինք այսուեղ, — հարցնում է Սեթոն գնացքի յուղողին։

— Ուղիղ 25 րոպե... Սխպեր, եղ ոհմոնալը, վորդու արիր, 25 ժամի պետք ուներ...»

Զգուշությամբ պտտվում է լծակը Սեթոյի ձեռքում։ Մացակը բաց է թողնում արգելակը։ «Քյոհլանը» սկսում է մոնչալ, նա շարժվում է տեղից, սկըզբում դանդաղ, ապա հետզհետե ուժեղացնում է վազքը։ Սլանում է նա, իր յետեռում թողնելով կայարաններ, կիսակայարաններ, լայնարձակ դաշտեր, ծառախիտ անտառներ, յերկնամբարձ սարեր, մրգառատ այգիներով շրջապատված գյուղեր... Վերջապես հեռվում յիրեռում են քաղաքի գործարանների ծխնելույզների անտառը, անհամար կառւրների ծովը։

— Մացակ ջան, ժամացույցին նայիր, պարտ հոչենք մնում...»

— Զե, Սեթո ջտն, ձիշտ ժամանակին ենք հասել, դեռ հինգ րոպե ունենք...

* *

Կտրվեց կինո-ժապավենը, վորն անցնում էր Սեթոյի աչքի առաջ, աղմկող դեպոյի գորշ պատերի սև փոնի վրա... Նա սրտալի «ալս» քաշեց, հառաչեց, մոնչաց իր շոգեքարշի նման և իր ձեռքի արձանագրությունն այնպիսի թափով շպրտեց, վոր թուղթը կպավ Առաքելի քթին ամրացրած ակնոցներին ու փռուով ըն-

կավ սեղանի կողքին, յերկու պատերի անկյունում
դրված թքամանի մեջ...

— Խելագարվեցիր, այ մարդ, — ասաց Առաքելը
հոնքերը վեր ցցելով ու ծոված ակնոցներն ուղղելով:

— Բա խելագարվելու բան չի. մեկ՝ վոր թիկուն-
քիս են խփել մեկ ել՝ վոր պատիվս և վոտնատակ ար-
վում...

* * *

16 տարեկան պատանի Սեթոն ընդունվում և դե-
պոյում իբրև սև քանվոր: Յերկու տարի անցնելուց
հետո, մեծ դժվարությամբ Սեթուին աջողվում և ա-
շակերտ մտնել դեպոյի փականագործական ցեխը: 20
տարեկան հասակում արդեն վորակյալ փականագործ
եր: Այնուհետև սկսում և հետաքրքրվել շոգեքարշի
մանրունքներով: Նա իր աշխատավարձի մի մասը զը-
ճարում և ցարական յերկաթուղային դպրոցում դա-
սավանդող ինժեներներից մեկին՝ որական մեկ ժամ
շոգեքարշի տնտեսությունն անցնելու համար:

Այսպիսով յերեկը դեպոյում 10—12 ժամ աշխատե-
լով, այնուհետև ինժեներից դաս վերցնելով, Սեթոն
մինչև կես գիշեր տանը պարապում եր: Հսկայական
ջանք ու յերկաթյա համառություն եր պետք, վոր-
պեսզի կարողանար ցարական չինովիկներից շոգե-
քարշի ստնդուխքների վրա բարձրանալու իրավունք
ստանալ:

Յեվ ահա 23 տարեկան Սեթոն ասածին անգամ
բարձրանում և այդ սանդուխքներից, վորպես մեքե-
նավարի ոգնական: Իսկ 28 տարեկան հասակում շոգե-

քարշի դեկը բոնած՝ լավագույն մեքենավարի համբավ
եր վայելում:

Այժմ արդեն 50 տարեկան, ալեխան մազերով,
մանր աչքերով, խոժող դեմքով հաղթանակ տղամարդ
եւ 34 տարվա ընթացքում Սեթոն դեռ մի պրոզուլ չի
ունեցել. նա շարունակ կրկնում ե.

— Պրոգուլն այնպիսի հիվանդություն ե, վոր ամ-
բողջ ընտանիքներ և թունավորում. իսկ մեր կոլեկ-
տիվի յուրաքանչյուր պրոցուլչիկ մի այնպիսի բացի
ե, վոր քայլքայում և մեր շարքերը:

Յերբ խորհրդային կառավարության գեկրետը պը-
րոգուլչիկների մասին լույս տեսավ. Սեթոն այդ լրա-
գրի համարը ձեռքին վազեց դեպի կուսկոմիտեյի սե-
նյակն ու, առանց բարեկու հավաքված ընկերներին,
վոգենորված բարձրածայն գոչեց.

— Վերջապես, զտել ենք մեր տրանսպորտը քայ-
քայող բացիկներին վոշնչացնելու գեղատոմը...

Նրան շատերը սիրում եյին, բայց շատերն ել տ-
տում, վորովհետև բոլորի պակասությունները յերես-
ներովն եր տալիս: Նրան, առնասաբակ, չեյին սիրում
ծույլերը, ովաչները, վատորակ նորոգում կատարող
փականագործները, զույգերթը խախտող պարավոզ-
նիկները, վորոնց համար Սեթոյի յուրաքանչյուր յե-
լույթը շանթ ու վորստ եր:

— Դուք ցարական դեպոյի ոեպեսիաների համը
շեք տեսել, կամ տեսել ու մոռացել եք, սոված ու ծա-
շրավ չեք աշխատել, նրա համար ել խորհրդային կար-
քերի ստեղծած այս փարթամ պայմանները ձեզ «նեղ»
են թվում... Թասիք ու նամուս ունեցեք, ամաչեցեք,

մեր սեփական պարավողներն են սրանք, դուք ի՞նչ
խղճմտանքով եք խորթ աշքով նայում...

Սեթոն շատ ոգնականներ եր փոխել Նրանք
շարունակ փախչում եյին, բողոքում, թե «մեր ինչ
կործն ե ռեմոնտով զբաղվել»... թե «Սեթոն մեղհան-
գիստ չի տալիս»... թե «մեր մարշուտը կատարելուց
հետո, նա ստիպում և ջարդված մասերը նորոգել»...

Նրա մոտ միքանիսները միայն յերկար մնացին:
Դրանց թվումն եր և Մացակը, վոր ահա յերրորդ տա-
րին և Սեթոյից չի ուղում բաժանվել:

Շատ անգամ դեպոյի աղմինիստրացիան կամեցել և
Մացակին մի ուրիշ պարավողի կցել, բայց ամեն
անգամ ել նա առարկել ե.

— Սեթոն ինձ մարդ գարձրեց: Նրանից գեռ ելի
շատ բան ունեմ սովորելու... Իմ «քյոհլան» շոգեքար-
շեց չեմ բաժանվի...

Իսկ Սեթոն ամեն մի նման դեպքում աղմուկ եր
բարձրացնում.

— Խեղճ տղեն ինձ հետ հավասար արյուն-քրախնք
և թափել մեռած շոգեքարշը կենդանացնելու վրա, հա-
զիվ չիգյարով ողնական եմ պատրաստել, են ել ձեռ-
քիցս ուղում եք խլել:

Ծնվ իսկապես, յերկու տարի առաջ, յերբ այդ
«քյոհլան» շոգեքարշն անտեր ընկած եր դեպոյում,
բոլոր պարավողնիկները հրաժարվում եյին նրա վրա
աշխատելուց: Եա շարունակ ռեմոնտում եր լինում,
համարյա բոլոր ամիսների ցուցակներում այդ «գեր-
մանկան» նշանակված եր: Այդ միշտ հիվանդ «գեր-
մանկան» բոլորի աշքից ընկել եր:

Մի որ, գնացքից հետո, յերբ Սեթոն ու Մացակը

ճաշում եյին դեպոյի ճաշարանում, Սեթոն կիսուկա-
տակ տոնով ասաց.

— Մացակ, ասում եմ, են «գերմանկան» վերցնենք,
էը, ի՞նչ կասես:

— Կատակ ես անում, թե լուրջ ես ասում... Թող,
զործ չունես, ջանըմ, ի՞նչ ես անցավ գլուխդ ցավի
մեջ դցում...

— Դու սիրալվում ես, Մացակ, եղ շոգեքարշը մեր
պարկում ամենալավը կդառնա, յեթե մեր ձեռքն
ընկնի...

— Դե, դու զիտես, վոնցոր խելքդ կտրում ե, Սե-
թո ջան, յես քեզ հետ համաձայն եմ:

«Գերմանկան» վերջապես գտավ իր տիրոջը: Ամ-
բողջ վեց ամիս Սեթոն ու Մացակը գնացքից վերա-
դառնալուց հետո, ամեն որ նրա դետալները քանդե-
լով, նորոգելով, շտկելով ու մաքրելով եյին զբաղ-
վում:

Սեթոյի ու Մացակի թափած աշխատանքի շնոր-
հիվ «գերմանկան» դարձավ պարկի լավագույն շոգե-
քարշերից մեկը: Առաջին մրցության մեջ յերկրորդ-
տեղը ձեռք բերեց, իսկ յերկրորդում փոխանցիկ զը-
րոշ շահեց: Նա պարկի պարծանքն եր:

Եերրորդ մրցության նախորյակին դեպոյում հըս-
կայական չափերի եյին հասել կրկնակի ռեմոնտի դեպ-
քերը, զույգերթի խախտումները սիստեմատիկ լինույթ
եյին ստացել, Սեթոյի շոգեքարշն այդ եպիդմիայից
աղատ եր: Այդ պատճառով ել առաջ եր քաշվել իրքն
յերրորդ մրցության առաջին թեկնածու: Նրա բրիգա-
զը ցուցակի առաջին տիղն եր զարդարում:

Մտարտի որը մոտենում եր: Դեպոյի ակումբում

կուսկոմիտեյի և աղմբնիստրացիայի նախաձեռնությամբ հրավիրված պարագոզնիկների ընդհանուր ժողովը արդեն քննել եր մբցության պայմանագիրը, Սեթոն իր հանգիպականով շատերի նախանձն եր շարժել:

— Եհթե Սեթոն այդքան բարձր ցուցանիշ է վերցնում, այդ նրա համար ե, վոր նրա շոգեքարշն ամենալավն ե... Տիեզ ինձ նրա շոգեքարշը, յես տասը տոկոս ավելին տամմ,—հայտարարեց մեքենավար Կարոն, ապա զիմելով դեպոյի պետին, ավելացրեց.— Սեթոն կարմիր խնձոր ե, ինչ ե, ինչու չեք ուզում նրանից վերցնել «գերմանկան»...

Սեթոն ու Մացակն իրար նայեցին: Սեթոն ժըպաց ու փսփսաց՝ «ես լոթի անպիտանը հիմա ել մեր «քյոհլանն» և ուզում գերեզմանի դուռը հասցնել»... Իսկ Մացակը տաքացավ, կարմրեց, ատամներն իրար սղմեց, ուզեց խոսք վերցնել, բայց Սեթոն հանգըտացրեց.

— Ապասիր, ինչ ես զի՞տ մոզու նման կատաղել, թող վոր ուրիշները խոսեն մեր մասին:

Հետեւյալ խոսողը դեպոյի վարպետ Առաքելն եր, վոր բոլոր պարագոզնիկներին իր հինգ մատի նման դիտեր:

Մենք բոլորս ել դիտենք, թե յերկու տարի տուաշ ինչ որումն եր Սեթոյի «գերմանկան»: Լոթի Կարոն ու պրոգուլչիկ Միխոն չմյին, վոր այն ժամանակ փախչում եյին «գերմանկից», և յեթե ընկներ նրանց ձեռքը, մենք հավատացած ենք, վոր վազուց այդ շոգեքարշից ձեռք քաշած կլինեյինք: Մեկ ե, յեթե այժմ այդ «գերմանկան» տանը ել Կարոյին, մի ամսից հե-

տո նա դարձյալ ոեմոնտի պիտի կանդնի... Հայրը վորդուն այնպես չի խնամի, ինչպես Սեթոն ու Մացակն են խնամում «գերմանկին»... Յեթե ձեզնից ամեն մեկը նրանց պես խնամի իր շոգեքարշը, ապա գեպոյի աշխատանքները կիսով չափ կկրծատվեն...

— Տեսմը, Մացակ, չասի՞ գոր հանգիստ տեղդ նըստի, — փսփսաց Սեթոն ժամանակով:

* * *

Բայց ինչ արձանազրություն եր, վոր կազմել ելին:

Այդ ժողովի գիշերը Սեթոն ու Մացակը վերադարձան զնացքից, շոգեքարշը պարկում բոլորովին անվասու ու առողջ թողնելով, ամեն ինչ տեղն ու սարքին:

Յերկրորդ որը Սեթոն նարյալը ձեռքին մոտեցավ շոգեքարշին: Մացակն ըստ սովորության, ալելի շուտ եր յեկել և մաքրում եր «քյոհլանը»:

— Սեթն, տես ինչ որումն ե մազութի խողովակը, — ասաց Մացակը, ցույց տալով շոգեքարշի տակ լճացած մազութն ու ջարդված խողովակը:

Սեթոյի վրա ասես սառը ջուր ածեցին: Նա խսկույն քարձրացավ վերև, սկսեց ստուգել ուզուլյատորը, կաթսան, լծակը, ամեն ինչ տեղն եր. հանկարծ աչքն ընկավ զալատնիկին...

— Վայ, յես ձեր... Մացակ, զալատնիկը ջարգել են...

Շոգեքարշից թռավ ցած, վազեց գեպոյի պետի մոտ: Աղա կուսկոմիտեյի քարտուղար, ներթափառ զիրներ, վարպետներ, սպեցներ... բոլորն ել իրար անցան, հավաքվեցին շոգեքարշի շուրջը, ստուգեցին, քննեցին և... փաստերն ամենայն մանրամասնու-

թյամբ արձանագրեցին ու մի որինակը տվին Սեթոյին
— Շախով կաց, Սեթո, — ասաց կուսկոմիտեյի քար-
տուղար Սերգոն, — չարագործին կրօնենք...

— Լավ ես ասում, Սերգո ջան, բայց եսոր ամսի
29-ն ե, ամսի 1-ին ստարտն ե... Վհնց կանգնեցնեմ
շողեքարշը, յերբ պայմանագրում իմ ես սաջով զրել
եմ «ուեմունտի չկանգնեցնել»... Ախր չե՞ վոր իմ ու
Մացակի անունը յերկու տարվա ընթացքում տարեկից
չի հանվել...

Ցերբ բոլորը ցրվեցին, Մացակն սկսեց քաջալերել
Սեթոյին.

— Սեթո ջան, ինչ ես խորասուղվել, տանք ոե-
մոնտի, Առաքելը վրա կտա տղերանց, ստարտից յետ
չենք մնա...

— Վայ, անկարելի բան ե, Մացակ ջան, յես մե-
ռած եմ... Ասա՝ մեր ձեռքով դրոշակը տանենք հանձ-
նենք, ելի...

Ու Սեթոն նորից խորասուղվեց: Նա շարունակ ծա-
մում եր իր շուրթերը: Ճամաքել եր նրա բերանը,
ձայնը խզվել... 34 տարի շարունակ արանսպորտին
տված իր հներդիան, վերջին տարիների փոխադրում-
ների համար մղած իր պայշարը նախորդ մրցություն-
ներում ձեռք բերած հաղթանակներով պսակվեց, և
այդ նրան նոր, յերիտասարդական ավյունով ու կո-
րովով տոգորեց... Իսկ այժմ... բարբարսի մեկը փոր-
ձում ե խլել այդ ամենը, վոտնատակ տալ, վոչնչաց-
նել...

Պատվի ու ինքնասիրության զգացմունքը, հրա-
պարակով իր վրա վերցրած պարտականություններն
ու տված հանդիսավոր խոստումը կատարելու գիտակ-

ցությունը նրա յերակների մեջ արյան տաք հոսանք
առաջ բերին... Նա թափահարեց իրեն, ամուր բռնեց
Մացակի ձեռքն ու մրմնջաց.

— Մինչև առավոտ մեր շողեքարշը պետք ե գուրս
գա զիծ... Դու ջարդված խողովակը հանի, յև գնամ
զալատնիկ դտնեմ:

Ցեվ նա գնաց վարպետ Առաքելի մոտ, վորի հետ
յերկար խոսեց ու վիճեց, բայց զալատնիկ չստացավ:

«Բա պահեստում զալատնիկ չլինի... սա ել նոր
քյալագ հո չի զիխիս», — մտածեց Սեթոն ու առանց
ժամանակ կորցնելու զնաց պահեստ:

— Բարե, Սեթո, եղ ինչ ե պատահել... Նոր, տղա-
ներից մեկն ինձ պատմեց... զալատնիկի զողը
գտնվեց, — անհանգիստ տոնով հարցրեց պահեստապե-
տըն իր զրասենյակի շեմքը մտնող Սեթոյին:

— Գողն իր վոտքով կգա... Դու ինձ են ասա, զա-
լատնիկ չունեմ պահած...

— Քո «գերմանկին» պետք չի գա, Սեթո ջան,
քեզ համար զլուխս չեմ խնայի... բոլորն ել հնե-
րից են...

— Վոչինչ, յես պետք կածեմ, դու տուր, յև նա-
րյալը մի քիչ հետո կրերեմ...

— Ախր ինչու յես վրադ ավելորդ ծախս զրել տա-
յիս, ավելի լավ ե մի քանի որ սպասես, շուտով կը-
ստացվիս...

— Մի քանի որ... Տն, վիզու հենց հարսանիքիս զի-
շերն են կտրել, դու յերեխս ունենալու մասին ես խո-
սմում... Ամսի 1-ին ստարտն ե, ինչ սպասելու ժամա-
նակ ես գտել...

— Դե, դու գիտես, խնդրեմ, ինքդ զնա ջոկիր,

* *

Սեղը նոր եր բացվել, արեի առաջին ճառագայթ-
ները հեղարար շոյուս ելին ծխից սևացած զեպոյի մը-
րու ճակատը:

Դեպոյի ներսում, մազութի ու մրի սրված շերտեցից փայլով շորերով մարդկանց բաղմության մեջ նոր եր սկսվել իրարանցումը, դաղգյահների ու մեքենաների աղմկալի ժխորը:

Մեկը մյուսին առաջելու, որվա ցուցանիշը գերակատարելու տենչով եր ապրում յուրաքանչյուրը:

Դեպոյի հրապարակի ոճապտույտ գծերի, կանավաների վրա, անցքերում կանգնած հիվանդ շոգեքարշերըն իրենց բողոքի ցասումն եյին արտահայտում լուսու անխոս:

Վաղը առողջ ու բախտավոր շոգեքարշերի ջարաններ հաղթանակների առաջին ժեղլն են ստանալու, ուստաին ու զվարթ աղմուկով, մեծաքանակ բեռներն առագ փոխադրումների մըցականչերին իրենց խոպոտձայներն են խառնելու... իսկ սրանք—թեաթափ, վիրավոր, անդամահատված, ապերախտ տերերին կորցրած՝ հուսակտուր վողք են տարածում իրենց շուրջը...

Սրանցից մի քիչ հեռու, լայնարձակ հրապարակում ժպտագեմ կանգնած ե զերմանկանա: Սա անտեր չի, Մացակը յերկշարք անիմսերի մեջտեղը, մեջքի վրա շուռ յեկած, գորտի նման տապակվել-կծկվել ե մազութաթաթափ գետնին. աչքերը հառած կաթսոյի հաստ փորից ցած ձգված խողովակին, նրա վերջին բոլտն ե ամրացնում:

Սեթոն զալատնիկը հարմարացնելու իր հնարագետ փորձերն ավարտած, վերհում լծակներն ե ստուգում:


— Մացակ, վճնց ե բանը:

— Ես ա, վերջացրի, Սեթո ջան, դուրս եմ գալի...

Ամբողջ զիշերվա անընդհատ աշխատանքից հոգնած, անքնությունից թմրած ու թոշնած յերկու մըրուա դեսքեր իրար նայեցին: Նրանց աչքերը մանրացել, կուչ եյին յեկել:

— Մացակ ջան, վաղը ստարտի յենք դուրս գալիս:

— Են ել վճնց, Սեթո ջան,



ՀՀ Ազգային գրադարան



NL0371248

60.970

ԳԻԱԸ 1 Ր. 50 ԿՈԴ.



Ց. ԹՁՅԲՈՅԵ

ԱՊՅԱՆԵԼՈՒ ԾԱԼՈՂՑՑՈ

Г. ОГАНЯН

В ВОЛНАХ ЖИЗНИ

(на армянск. яз.)

ԱՎԵՋԱՑՈ

САХЕЛГАМИ

ТБИЛИСИ